

- Յարմարեցաւ բանս ի թըւին  
Հայոց Ռ եւ ԼԵ (1586),  
Մայրաքաղաքս Բաղէշ  
ի դուռն սուրբ Յովանիսի,  
Տէրըն տացէ եւ ձեզ բարի,  
յաւուր մեծի դատաստանի: Ամէն:
- Հրտ. Ակինեան, Բաղէշի Դպրոցը, էջ  
65—66:
16. Թղ. 342բ. Արեգի Բ. — Ժ. Մարտի.  
Վկայարանութիւն Նոր վկային սրբոյն Կա-  
րապետին (Ամթեցւոյ, մականուամբ Զէլանկ  
կոչեցեալ): Այս Վկայարանութիւնը, այլուստ  
անձանօթ, տակաւին չէ հրատարակուած:
17. Թղ. 347բ. Արեգի Զ. — Ժ. Մար-  
տի. Նահատակութիւն Գրիգոր Բալուեցւոյ  
(† 1290): Թ. 10, 305բ. Հրտ. Նոր Վկայք,  
էջ 104—118:
18. Թղ. 384բ. Ս. Յակոբայ Սրճոյ եպիս-  
կոպոսիասացեալ ի թերահաւատութիւն Թու-  
մայի: Յորժամ յարեաւ հովիւն... (Թ. 10,  
թղ. 369բ):
19. Թղ. 398բ—400ա. Առաքել վարդա-  
պետի ասացեալ երգ վասն տանելոյն Յովսէ-  
փայ զՄարիամ ի տուն եւ վասն Աւետեացն  
հրեշտակապետին: Առեալ Յովսէփ տարաւ  
զկոյսն Մարիամ ի գիւղն Նազարէթ...:  
Վջ. այլ եւ ի ստուգութիւն բանիս նա միայն  
գիտենա, որոյ առաջի ամենայն ինչ մերկա-  
պարանոց կայ: (Հանուած Առաքել Բաղի-  
շեցւոյ ոտանաւորած Աստուածածնի Պատ-  
մութենէն. Տաշեան, Թ. 499, թղ. 91բ:  
Յուց. 969):
20. Թղ. 414բ. Ահեկի ԺԱ. — ԺԸ.  
Ապրիլի. Վկայարանութիւն Մահակայ պար-  
սիկ վարդապետին († 1417): Թ. 10, 422ա,  
հրտ. Նոր Վկայք, էջ 208/216:
21. Թղ. 422բ. Ահեկի ԺԵ. — Ի. Ապր.  
Վկայարանութիւն Նոր վկային Թամարայ:  
Թ. 10, թղ. 430ա, հրտ. Նոր Վկայք, էջ  
186—197:
22. Թղ. 516ա. Հրտոյց Դ. — Ժ. Յուլ.  
Վկայարանութիւն Նոր վկայիցն Մելքիսե-  
պեկի եւ Կարապետին († 1203): Թ. 10, թղ.  
511ա. Նոր Վկայք, 198—204:
- ՅԻՇԱՏԱՅԱԳՐՈՒԹԻՒՆՔ: 1. Թղ. 566բ.  
Գլխաւոր Յիշատակարան. Փառք...: Որ եւ  
զիս զչորացեալս կանանջեցոյց եւ զանպտուղս  
պտղաբերեաց, զանկեալս կանգնեաց, զխա-  
ւարս լուսաւորեաց, զիմարեալս զգաստա-

- ցոյց, զթըմբեալս զարդուց. եւ ետ զօրութիւն  
անշնորհք ձեռացս եւ բոլոր տկար եւ տգէտ  
իմարիս եւ տրուփիս ամենայն հաւատացե-  
լոց անուան իւր ի սկսել եւ յաւարտ հասանել  
սուրբ գրոցս: Թէպէտ եւ ամենայն մարդկան  
պարսաւելի եւ ծաղրանք էի սկսիլս, բայց  
ողորմածն եւ մարդասէրն ոչ արար այնպէս,  
որպէս էր կարողութիւնս իմ. այլ որ ցամա-  
քեալ յորովայնին զաւակն շնորհեաց, նոյն եւ  
զանպաւակս ի բարեաց՝ պտղաբերեաց...:  
Արդ կատարեցաւ սուրբ գիրքս ի թուակիս  
մերում ՌՃԼԳ (1684) ի Կիւրոս կղզիս, ընդ  
հովանեաւ սուրբ եւ փառաւորեալ մեծա-  
պա(յ)ժառ Աստուածածնիս եւ սուրբ Մակա-  
րայ՝ ձեռամբ անմիտ Թումայ արեղայիս, որ  
եմ ի դաւառն Բալա, ուր տուաւ գիրս  
Հայոց մեծ վարդապետին Մեսրոպայ: Ի սուրբ  
Երուսաղէմ սկսեալ եւ եկեալ յաստ կատար  
եւ աւարտեցաւ, որպէս ցուցանէ զայն որ  
Երուսաղէմայ միարան յիշէ, զայնքանն անդ  
գրեցաւ. եւ այն որ սուրբ Մարակայ դուռն  
գրեցաւ: Եւ եղաք յիշատակ ի դուռն սուրբ  
Աստուածածնայ եկեղեցուս մեզ եւ ամենայն  
հաւատացելոց: Որ եւ արժանի առնէք յիշե-  
լոյ զԹումայ արեղայս եւ զճնօղս մեր զՄե-  
լիտոսն եւ զմայր մեր զՈսկին եւ զեղբարքս  
մեր զՀարապետն եւ զԿարապետն եւ զՊա-  
չատուրն եւ զքուրս մեր եւ զամենայն արեան  
մերձաւորքս եւ մեզ վրայ աշխատողացն եւ  
երախտիք ունողացն, հոգեւորն ուսուցանո-  
ղացն եւ մասն բարոյ մեզ ցուցանողացն:  
Եւ մեր աղքատ լինելուս ով ոք խարճն տայ,  
Աստուած իւրեան(ն)ց վարձահատուց լինի  
մեզ իւրեանց մասն բաժին յարքայութեանն.  
եղիցի (Հրտ. ԲԱԿ 195—196):
2. Թղ. 5բ. Մանաւանդ ողորմեա ստա-  
ցողի գրոցս տէր Թումա կրօնաւորին եւ ծնօ-  
ղացն Մելիտոսին եւ Ոսկեհատին եւ եղբարցն  
Հարապետին եւ Կարապետին եւ Սաչատուրին  
եւ քուրսն եւ ամենայն արեւնառու մերձա-  
ւորացն: (Նոյնը յաճարս կրկնուած, նաեւ  
համառօտ ձեւի մէջ թղ. 11բ եւ այլն):
3. Թղ. 24ա. Մանաւանդ զըծողիկն սորա  
տառապեալ Թուման եւ ծնողն նորա: Հմմտ.  
նաեւ թղ. 27ա:
4. Թղ. 39ա. Ողորմեայ Գրիստոս Աս-  
տուած ստացողի սորա Թումա անարժան  
կրօնաւորի եւ ծնողաց նորա Կր. եւ Լս. (այս-  
պէս) եւ Պլպուլ (տակինը ջնջուած եւ վրան  
գրուած) թղթի կոկողին եւ սուրբ Յակոբայ

- սպասաւորաց: (Իսկ թղ. 47բ. «Եւ թղթի կո-  
կողին Մելքոնին»):
5. Թղ. 63բ. Ողորմի ամենայն հաւատա-  
ցելոց եւ սուրբ Երուսաղէմայ միարանիցն:  
(Նմաններ նաեւ 64ա, 65ա եւն):
6. Թղ. 400բ. Ողորմեայ ամենայն հա-  
ւատացելոց եւ սուրբ Մակարայ միարան եղ-  
բարցն եւ զճնօղի սուրբ գրոցս Թումայի» եւ  
այլն:
7. Թղ. 566բ (ա՞յլ գրչէ). Աստուած  
ողորմի Թումային եւ հօրն Միքճանին եւ  
մօրն Մարթային եւ ամենայն ընտանեացն.  
քանզի կապելոյն խարճն սա ետ: Աստուած  
ողորմի Եսայոյն որ զկտրիչն նորոգեաց:  
Հրտ. ԲԱԿ 196:
8. Թղ. 567ա. Monsieur dicra՞ն հէր-  
քէրէ Ռէմիլէ քաղաք ծովուն մուտիք Աս-  
տուածասուածին (ա՛յսպէս) եւ սրբուն  
Մակարա ծէրամբ հէտ:
- Ձեռագրիս Ա. մասն (Նաւասարդ Ա. —  
Արեգի ԻԹ.) գրուած է Երուսաղէմ. իսկ  
Բ. մասը (Արեգի Լ. — Աւելեաց Ե.) Կիւրոս  
ի Ս. Մակար:

(Շարունակելի): 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՄԸՍԸՐԼԵՆ ԳԵՐԳՈՍԱՆԵՐ

Հին Հայ Կաթողիկէ Գերդաստաններու  
մեծանուն շարքին մէջ պատուարեր տեղ մը  
կը գրաւէ Մըսըրլեան Գերդաստանը՝ հակա-  
ռակ անոր որ թէ՛ իր անունը եւ թէ՛ իր գոր-  
ծունէութիւնը մեծ մասով անձանօթ մնացած  
են: Մըսըրլեանները ազգային բարեարմեք  
են եղած: Ասիկա արդէն կը բաւէր որ հայ  
սերունդները ոչ միայն չմոռնային, այլ եւ  
երախտագիտութեամբ յիշէին անոնց պա-  
տուական անունը: Եթէ այսօր կը փորձենք  
Մըսըրլեան Գերդաստանի կենսագրականը  
ընելով ցոյց տալ անոնց վայելուչ տեղը հայ  
նորագոյն պատմութեան մէջ՝ ունինք գի-  
տակցութիւնը մեր անբաւականութեան մա-  
նաւանդ այնպիսի շրջանի մը մէջ, ուր ոչ  
միայն ատաղձն է պակաս, այլ եւ բուն իսկ  
ինքը Գերդաստանը սպառած կամ բունաւեր  
եղած՝ օտար աշխարհներու մէջ ցրուած կոր-  
սուած է:

- 1953 Մարտ 3 թուականով նամակի մը  
մէջ Պոլսոյ Հայ Կաթ. Համայնքի Վիճակա-  
ւոր Գերապայծառ Պօղոս Արքեպ. Քիրէ-  
ձեան կը գրէ որ «Այժմ այս հոյակապ գեր-  
դաստանէն Պոլսոյ մէջ այր մարդ մնացած  
չէ»:
- Մեր ջանքը պիտի ըլլայ, հետեւաբար,  
այսօր կորուստէ փրկել, ինչ որ տակաւին  
կարելի է փրկել: Վաղը գուցէ այսքանն ալ  
կարելի պիտի չըլլայ:
- Ա. ՄԸՍԸՐԼԵԱՆՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ
- Մըսըրլեան Գերդաստանի անդամներու  
հնազոյն յորջորջումն եղած է — Մըսըրլը —  
թրքական անուանակոչում մը, որ ցոյց կու  
տայ թէ անոնց ծագումը Եգիպտոսի մէջ  
փնտռելու ենք: Ասիկա մասամբ կը հաս-  
տատէ պարիսարնակ մեր յարգելի բարեկամ  
Պ. Ղեւոնդ Թընկերեան, որ կը գրէ. Leurs  
noms qu'ils adoptèrent, proviennent que ceux-  
ci s'enrichirent dans la négoce avec la Syrie  
et l'Égypte.
- Հարցը կը մնայ սակայն միշտ կարօտ  
լուսարանութեան, քանի որ չենք գիտեր  
թէ «Մըսըրլը» յորջորջումը Գերդաստանի  
սկզբնակա՞ն անունը եղած է թէ յետոյ իբրեւ  
տիտղոս առնուած է: Հաւանականն այն է  
որ Գերդաստանի անդամներու Պոլիս հաս-  
տատուելու առթիւ «Մըսըրլը» յորջորջումը  
իւրացուցած են՝ իբր յիշատակ իրենց նախ-  
կին սերտ կապակցութեան Եգիպտոսի հետ:
- Հետաքրքրական է որ Հ. Գրիգորիս Ծ.  
Վ. Գալթմբիարեանի ձեռագրիներուն մէջ ան-  
գամ մը, այն է՝ Անտոն Վ. Մըսըրլեանի ա-  
նունն ըով գործածուած է նաեւ Եաղլըֆեան  
անունը: Մըսըրլեան — Եաղլըֆեան ի՞նչ  
աղերս կայ երկուքին միջև՝ անձանօթ  
է մեզ:
- Թէ ե՞րբ հաստատուած են Մըսըրլեանք  
Պոլսոյ մէջ՝ չունինք տեղեկութիւն: Այս  
Գերդաստանէ պոլսեցի հնազոյն անձը ԺԸ.  
գարու կէսերէն է: Տարակոյս չկայ թէ այդ  
թուականէն շատ աւելի հին է սակայն անոնց  
գոյութիւնը Պոլսոյ մէջ:
- Բ. ՄԸՍԸՐԼԵԱՆՆ ԶՆԱԳՈՅՆ ԱՆՁԸ
- Մըսըրլեան Գերդաստանէն մեզի ծանօթ  
հնազոյն անձն է Անտոն վարդապետ Մըսըր-  
լեան (Եաղլըֆեան), որ 1758էն վերջ եղած

է Պոլսոյ Հայ Կաթողիկէներու Վեփիլ կամ Վիփար: Ծնողք եւ ծնունդ անծանօթ են: Զինքը առաջին անգամ յիշողն է Ասկէրեան, որ Պոլսոյ Հայ Կաթողիկէներու առաջին Առաջնորդներու ցանկը ներկայացնելով՝ կը գրէ.

- «Ա. Սէրասեան Աթանաս Եպիսկոպոս, յամի . . . . . 1758
- Բ. Մըսրըլեան Անտոն Վարդապետ, որ հրաժարելով իրեն յաջորդեց . . . . . 1779
- Գ. Սօֆեալեան Սահակ Վարդապետ, որուն օգնիչ գրուեցաւ Հռովմէն Ազգերեան Ստեփան Վարդապետ . . . . . 1784
- Դ. Ազգերեան Ստեփան Վարդապետը պաշտօնէն ելնելով, դարձեալ Մըսրըլեան Անտոն Վարդապետ Ազգին վրայ Եպիսկոպոս օծուեցաւ . . . 1806»<sup>1</sup>

Անտոն Վ. Մըսրըլեանի առաջնորդութեան առաջին շրջանը եղած է, հետեւաբար, 1858—1879ի միջոցին, երբ պարզ վարդապետ էր: Առաջնորդութեան երկրորդ շրջանը տեւած է 18 տարի, 1806—1824, այսինքն՝ մինչեւ իր մահը:

Յայտնի է թէ Տիգրանց 4 անձերու սպանդին (1819ին) յաջորդած է հալածանք եւ աքսորք Հայ Կաթողիկէներու: Արդ 1820ի սկիզբը կը գրէ Պէրպէրեան. «... եկն ի Դրանէ հրաման առ Պատրիարքն գտանել զվեց քահանայս տանն Տիգրան եւ մերձաւորաց նոցա, զի աքսորեացին: Եւ Պատրիարքն փութացոյց շտապաւ զիշխանս այնու կողման, զի զո՞ եւ իցէ վեց քահանայս յերեանցայնոց գտեալ տացեն: Եւ նոքա փութացեալ, խաբէութեամբ հրաւիրեցին ի տունս իւրեանց զքահանայս՝ որպէս թէ վասն խոստովանութեան ինչ իցէ կոչումն նոցին, այլ զիշխարայն ազդ արարեալ ժամկոչաց Հայոց՝ հանին ի տանէն եւ ետուն ի ձեռս նոցա, եւ առաքեցին ի Պատրիարքարանն եւ էին անուանք նոցա այսօրեկ: Անտոն Եպիսկոպոս Վիփար իւրեանց, Քայիչքուշաք ճգնաւոր կոչեցեալն, Պօղոս վարդապետ Գաղատացի Մարուշ կոչեցեալն, Պետրոս վարդապետ եւ Յովհաննէս վարդապետ, ընդ սոսա գտաւ եւ Հայր Դաւիթ խոհմախալ վարդապետն Աբրա-

յեան. հինգն Գոլէճեանք եւ մին այս Աբրայեան»<sup>2</sup>:

«Գոլէճեան» բացատրութենէն յայտնի կ'ըլլայ որ Անտոն Վ. Մըսրըլեան Հռոմ կըրթուած եւ ձեռնադրուած է:

Իր աքսորքը տեղի ունեցած է 1820 Յունուար 12ին. աքսորուած է «Սուսամ Ատա» (Սամոս կղզի): Մօտ չորս տարի տեւած է Մըսրըլեանի աքսորքը, որ արժած է իր կեանքը: Տակաւին Պոլիս չվերադարձած՝ 1824 Սեպտ. 2ին կը կնքէ իր կեանքը Իզմիրի մէջ: Այս լակոնական տեղեկատուութիւնները կը պարտինք մանրագիր հայատառ թրքերէն ձեռագրի մը, որուն անծանօթ հեղինակը ժամանակագիր բռնած է ԺԹ. դարու առաջին քառորդին ծագում առած անօրինակ ողբերգութեանը Հայ Կաթողիկէ Համայնքին: Ահա Զեռագրի խօսքերը. «1824 սեպտեմբեր 2. մըսրըլեան անտոն գերապայծառ էօլմիշ իզմիրտէ. խապէրի կելտի ըստամպօլա, փօսթա իլէ»<sup>3</sup>: Զեռագիրս կը գտնուի Վիեննայի մեր Մատենադարանը, Հ. Գրիգ. Գալէմքիարեանի կիսաւարտ գործերու հաւաքածոյին մէջ:

Ժամանակակից մը, Հ. Ղուկաս Վ. Օղուլլուխեան, կը գրէ որ երբ Տիգրան հարազատք 1819 Օգոստոսին բանտարկուած էին փողերանոցի մէջ եւ մօտալուս մահուան ստուերը կը սաւառնէր իրենց գլխուն վերեւ՝ «Մարգիտ Տիգրանց կամէր առաքել զմի ոմն ի սպասաւորաց իւրոց առ Առաքելական Փոխանորդն Հայոց Ուղղափառաց, առ Գերապայծառ Անտոն վարդապետ Մըսրըլեան՝ ի խնդրել զթողութիւն յամենայն քահանայից... եւ մինչդեռ ըստ խրատու եղբոր իւրոց Գրիգորի հանդերձեալ էր ո՛չ բանիւ բերանոյ, այլ զըրով կատարել զնոյն, կոչեաց զնոսա փողերանոցապետն ի հարցուփորձ. եւ այնպէս առժամն խափանեալ գրութիւնն, յա այնորիկ չյաջողեցաւ նոցա ո՛չ գրել եւ ոչ բանիւ բերանոյ ծանուցանել: Իսկ քօրք նոցին Տիրուհի եւ Թագուհի ի նոյն մտարեբալ ի Պատրիարքարանին, եւ ոչ համարձակեալ գրել առ Գերապայծառ Անտոն վարդապետն, գրեցին տոմսակ առ Ուրուպճեան Յովհաննէս վարդապետ»<sup>4</sup>:

<sup>2</sup> Աւետիս Պէրպէրեան, Պատմութիւն Հայոց, Կ. Պ. 1871, էջ 112—113:  
<sup>3</sup> Հմմտ. նաեւ Ասկէրեան, անդ՝ էջ 17—18:  
<sup>4</sup> Զեռագիր Մատենադարանին Վիենն. Միթթ. Թ. 601, էջ 121—122:

<sup>1</sup> Յ. Ասկէրեան, Հատուկ քաղաքականութիւն, Տփլիս 1868, էջ 12—13:

Գ. ՄԸՍՐԸԼԵԱՆ ԳԵՐԳԱՍՏԱՆԻ ԵՐԿՈՒ ՏՈՂՄԵՐԸ

Մըսրըլեանք ԺԸ. դարու կէսին երկու դատ Տոհմերու ճիւղաւորումով կը ներկայանան. տոհմերէն մէկուն գլուխն է Մարտիրոս Մըսրըլեան, իսկ միւսինը՝ Յովհաննէս Մըսրըլեան:

Աղագանական ի՞նչ աղերս կայ այս երկու տոհմերու միջեւ: Մէկ եւ միեւնոյն ծնողքի երկու գաւազնե՞ր են Մարտիրոս եւ Յովհաննէս, թէ իրենց արեւակցական զօրը շատոնց զիրենք իրարմէ հեռացուցած է՝ իրենց նախնիքներու մէջ միայն ունենալով հասարակաց նախածնողք մը: — Այնքանը միայն կրցած ենք ստուգել որ Մարտիրոս եւ Յովհաննէս, քէիւ միեւնոյն Գերապայծառ շառաւիղներ՝ սակայն երկու տարբեր ընտանիքներէ կը սերին, որոնց հնութիւնը մինչեւ 1700ի սկիզբները կը բարձրանայ:

Այս երկու Մըսրըլեաններէն Մարտիրոսի սերունդը աւելի ծանօթ, երեւելի եւ երկարատեւը եղած է, իսկ Յովհաննէսի սերունդէն միայն քանի մը անձեր ծանօթ են, որոնցմէ վերջինը 1888ին վախճանած է:

Նկատենք այս երկու Տոհմերու պատմութիւնը գատ գատ:

Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՄԸՍՐԸԼԵԱՆԻ ՏՈՂՄԵՐ

Պոլսոյ Հայ Կաթողիկէ Համայնքի պատմութեան համար անգնահատելի ծառայութիւն մատուցած է Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան՝ իր «Գերեզմանատուն Կաթողիկէ Հայոց Կ. Պոլսոյ» երկով, ուր անսպառ նիւթ կայ ուսումնասիրութեան եւ ուր յաճախ կարելի է հանդիպիլ անակնկալ լուսարանութեանց այնպիսի նիւթերու, որոնց մասին ուրիշ կողմէ անհնարին կ'ըլլայ ստանալ որեւէ ծանօթութիւն:

Քօսեան իր այդ օգտաշատ գործին մէջ տուած է ամբողջական կազմը Մարտիրոս Մըսրըլեանի ընտանիքին: Ատոր առիթը եղած է Մըսրըլեանց ընտանեկան մահաբճաններու ընդօրինակութիւնը, զոր գտած է նա Պոլսոյ Հայ Կաթողիկէներու Ս. Աստուածածին Մայր-Եկեղեցոյ որմերուն մէջ: Կանխենք հոս յայտնել որ Մըսրըլեաններն են, որ կանգնած են Ս. Աստուածածին Մայր-Եկեղեցին, որուն կամարներուն տակ կը հանդէսին բարերար Մըսրըլեաններէն երկուքին մարմինները:

Մարտիրոս Մըսրըլեան մեռած է 1834 Դեկտ. 14ին, 63 տարեկան, որով ծնած կ'ըլլայ 1771ին: Պատմութեան մէջ իր մասին ոչ մէկ ակնարկութեան հանդիպած ենք: Ամուսնացած էր Սրբուհի Տէվրիշեանի հետ, որ մեռած է 1841 Դեկտ. 13ին, 57 տարեկան, ծնած հետեւաբար 1784ին:

Մարտիրոս եւ Սրբուհի ունեցած են 7 զաւակ, երկուքը մանչ, հինգը աղջիկ, որոնց անուններն են. Մարիամ, Պետրոս, Լուցիա, Սոփիա, Պօղոս, Ազաւնի եւ Վառվառ-Բուբուլ:

1. Մարիամ Մըսրըլեան. — Ծնած է 1802ին եւ ամուսնացած է Էփրեմեան տնէն անձի մը հետ, որուն անունը անծանօթ է: Այս ամուսնութենէն ծնած են. Սիմոն Հէփիմեան (+ 1837 Դեկտ. 15, 5 տարեկան), Յովսէփ Հէփիմեան (+ 1848 Յուլ. 13, 6 տարեկան), Տիրուհի Հէփիմեան (+ 1872 Օգոստ. 15, 48 տարեկան), Թագուհի Հէփիմեան (+ 1875 Նոյ. 9, 37 տարեկան), Իսկուհի Հէփիմեան (+ 1879 Դեկտ. 13, 52 տարեկան): Մարիամ Մըսրըլեան մեռած է 1847 Յուլ. 4:
2. Պետրոս Մըսրըլեան. — Մըսրըլեան Գերգաստանի անուանի դէմքերէն մին է Պետրոս Մըսրըլեան, բայց անծանօթ մնացած են իր կեանքի եւ գործի մասին մանրամասնութիւնք: Իր մահուան առթիւ ժամանակակից Հայ թերթը գոհ եղած է միայն ընդհանուր խօսքերով դրուատելու իր ստացած բարձր կրթութիւնը, կայսերական գանձուն, Մայր Թագուհիի սեղանադրութեան մէջ բարձրագոյն պաշտօններ վարած ըլլալը, որոնց հետեւանքով անուանի, հարուստ եւ ազնուական անձ մ'եղած եւ իր նիւթական մեծ կարողութիւնը բարեգործական նպատակներու գործածելու փափագ եւ ծրագիր ունեցած է<sup>5</sup>:

Ինչպէս յետոյ պիտի տեսնենք՝ իր փափակներու եւ ծրագիրներու գործադրիչները կ'ըլլան իր եղբայրն ու քոյրերը, յաւերժացրելով իր ազնիւ հոգւոյն յիշատակը:

1857ին կը յիշուի իբրեւ նախկին աշակերտ Պոլսոյ Վիեննական Միթթարեան Վարժարանի: Հետեւաբար Միթթարեան Վարժարանի մէջ ստացած է իր նախնական ուսումն ու դաստիարակութիւնը<sup>6</sup>:

<sup>5</sup> Մեմուայր Հավատիս, Կ. Պ. 1862, Թ. 472: — Հմմտ. Մասիս, Կ. Պ. 1861, Թ. 517:  
<sup>6</sup> Տե՛ս Կանոնադիր Բնկերութեան նախկին աշակերտաց Վարժարանին Հարց Միթթարեանց Վիեննայի Կոստանդինուպոլիս, Վիեննա 1888, էջ 14:

1861ին Մասիս<sup>7</sup> կը յիշէ իրրեւ անդամ թուրք պետական Յանձնատոմարի մը:

Պետրոս Մըսըրը ծնած է 1804ին եւ մնացած ամուրի: Օղտակար մասնակցութիւն ունեցած է Հայ Կաթ. Համայնքի ազդ. գործերուն: Ազդ. Ժողովքի մ'առթիւ, 1853ին, Ասկէրեան զինքը կը ներկայացնէ. «Մըսըրը Պետրոս Աղա, ի Հասունեանց<sup>8</sup>»:

Կանխահաս մահ մ'ունեցած է Պետրոս Մըսըրըն, 1862 Հոկտ. 30ին: Թաղման ներկայ եղած են կայսերական եւ Բարձր. Դրան բարձր պաշտօնեաներ: Գեր. Հասունեան Արքեպ. ի նախագահութեամբ կատարուած թաղման հանդիսական արարողութիւնէ վերջ՝ մարմինը ամփոփուած է Ս. Յակոբի շրջափակին մէջ<sup>9</sup>:

3-4. Լուցիա եւ Սոփիա Մըսըրլեան. — Լուցիա ծնած է 1807ին, իսկ Սոփիա՝ 1811ին: Երկուքն ալ մնացած են կոյս: Հօրը հարստութիւնէն իրենց ինկած ժառանգութիւնը միացընելով՝ յատկացուցած են Բերա, Սաղըդ-Ազաճի վրայ գտնուող Հայ Կաթողիկէներու Ս. Աստուածածին Մայր-Եկեղեցիին շինութեան: Այս մասին յետոյ:

Լուցիա վախճանած է 1867 Դեկտ. 10ին, 60 տարեկան, իսկ Սոփիա՝ 1887 Մարտ 14ին, 76 տարեկան: Երկուքն ալ թաղուած են Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

5. Պողոս Պէյ Մըսըրլեան. — Ծնած է 1812ին: Թէեւ մանրամասնութիւնք կը պակասին Պողոս Մըսըրլըի մանկութեան եւ պատանեկութեան մասին, սակայն կը թուի թէ շատ հոգ տարուած է ասոր ուսման եւ դաստիարակութեան: Անտարակոյս թէ՛ տոհմիկ եւ թէ՛ օտար կարող ուսուցիչներու ձեռքին տակ է որ ան ստացած է լաւագոյն պատրաստութիւնը, որ զինքը ատակ ըրած է կեանքի ասպարէզի մէջ այնքան մեծ յաջողութիւն գտնելու, հասնելու համար մինչեւ պալայի բարձրագոյն պատուաստիճանին:

Մըսըրլեաններու գործի ասպարէզն եղած է սեղանաւորութիւնը: Պողոս բացառիկ յատկութիւն ցոյց տուած է այս արհեստին մէջ: Ընտրուած է Մայր-Թագուհիի սեղանաւոր: Իր արժանիքները գնահատուելով՝ 1865էն առաջ ստացած էր արդէն Պէյութեան աստիճանը, որ կ'ըլլայ իր սերունդին ազնուակալութեան ժառանգութիւնը: 1865 Յուլիսին

Երկաթեայ քաղին երրորդ աստիճանը կը դրէ Աւստրիոյ Փրանկիսկոս Յովսէփ կայսրը<sup>10</sup>: 1866 Յուլիսին Սուլթանը կը շնորհէ իրեն Իւլայի առաջին աստիճանը եւ Օսմանիէ պատուանշանի երրորդ կարգը<sup>11</sup>: Պատիւներ, որոնք ո'րքան բարձր, ա'յնքան անձին արժանիքները կը մատնանշեն:

1866 Մարտ 12ին մեծ հրդեհ մը հրոյ ճարակ ըրած էր Սամաթիոյ թաղին բազմաթիւ շէնքերը: Այրած էին Սահակեան եւ Նունեան-Վարդուհեան վարժարանները, Ս. Գէորգ, Ս. Երրորդութիւն, Ս. Թորոս եկեղեցիները, Ս. Կարապետի մատուռը, Հայ թաղական խորհրդարանը եւ խուցերը, Սահակեան Ընկերութեան քարաշէն թանգարանը, ուր երկար տարիներու յարատեւ ջանքերով հաւաքուած էին 6-7 հազար հայերէն զէրք, 5-6 հարիւր Ձեռագիր եւ 7-8 հազար զանազան լեզուով գիրք, տետրակ, եւն<sup>12</sup>:

Ս. Սահակեան մանչ տղաքներու համար առժամանակեայ փայտաշէն վարժարան մը — «Խրճիպին դպրոց»<sup>13</sup> — մը կը շինէ Գէորգ Պէյ Երամեան, բայց աղջիկները կը մնան առանց ուսման, դպրոցի յարմար չէնք մը չգտնուելուն համար:

Արդ, Պողոս Պէյ Մըսըրը, որուն համար Ազգի գաւակներուն միջեւ խտրը չկար, փառաւոր տուն մը կը գնէ եւ Նունեան-Վարդուհեան Հայ աղջկանց դպրոցի կը յատկացնէ: Ասկէ դատ՝ աղջկանց այդ վարժարանի համար դիմում կ'ընէ կառավարութեան եւ ամսական նպաստ մը յատկացնել կու տայ, «որուն համար Սամաթիոյ միջոց երախտագիտութեամբ կը յիշեն Պողոս Պէյ Մըսըրըի վեհանձնութիւնը<sup>14</sup>»:

Պողոս Պէյ Մըսըրըի Հայ կրթական գործին համար ըրած առատաձեռն նուիրատուութիւնը այդքանով վերջացած չէ: Ան միեւնոյն Սամաթիոյ թաղին մէջ դպրոց մըն ալ հայ կաթողիկէ աղջկանց համար կանգնած է: Սամաթիոյ մէջ ընտիր տուն մը գնելով՝ դպրոցի համար պէտք եղածը կը գետեղէ եւ կը յանձնէ Անարատ Յղութեան Հայ Մայրապետներու, որոնք աղջկանց վարժարանի մը բացումը կը կատարեն:

<sup>10</sup> Մասիս, 1865, թ. 701:  
<sup>11</sup> Անդ՝ 1866, թ. 754-755:  
<sup>12</sup> Ժամանակ, Կ. Պ. 1863, թ. 85:  
<sup>13</sup> Ծիածան, Կ. Պ. 1871, թ. 22:  
<sup>14</sup> Պետրոս Կարապետեան, Հնգադարեան Յիշատակարան Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ, Կ. Պ. 1935, էջ 139:

<sup>7</sup> Մասիս, 1861, թ. 517:  
<sup>8</sup> Յ. Ասկէրեան, անդ՝ էջ 270:  
<sup>9</sup> Մէմու. Հավ., 1862, թ. 472:

Այս դէպքը տեղի ունեցած է 1868ի ամառը կամ աշնան սկիզբը: Ժամանակակից Հայ թերթերը յիշատակած են զայս: Օրագիր հետեւեալ ձևով կը յիշատակէ՝ գրելով 1869 Հոկտ. 14ին. «Գեո տարի մը առաջ Սամաթիոյ աղջկուքը գուրկ որ եւ է օրինաւոր դաստիարակութեան՝ ո'ր մէկը իր ծնողացը թով, ո'ր մէկն աւերակաց մէջ եւ ո'ր մէկը փողոցները միջոցեւ օրերնին կ'անցնէին, հռովմէականութեան տարածիչ մարմինը պատեհ առիք գտաւ Սամաթիան իրեն նպատակին ծառայեցնելու. ընտիր տուն մը ծախու առին եւ վերատեսչութեամբ մայրութիւնն ու ընտանեկութիւնը ուխտով ուրացող մայրապետներու՝ մայրեր հասցնելու ճրի դպրոց մը բացին<sup>15</sup>»:

Աւելի կարեւոր է Փոքր Մասիսի տուած տեղեկութիւնը: Վերջինս կը գրէ 1869 Օգոստոս 20 թուականով. «Յայտնի է թէ Մըսըրլեան Վսեմ. Պողոս Պէյը Սամաթիա աղջկանց վարժարան մը շինել տուած է, գոր ի պատիւ Բարձր. Մայր Թագուհւոյն վալիսէ Մէքէպի անուանած է: Այս վարժարանին աշակերտուհիները ընտիր գորգ մը ձեռակերտած ըլլալով՝ Մայր Թագուհւոյն համար, նորին բարձրութիւնը 20.000 զուրուշ շնորհեց վարժարանին<sup>16</sup>»:

Փոքր Փուլզն ալ կը յիշատակէ այս նուիրատուութիւնը, ըսելով թէ գորգը՝ «սէճճատէ» (petit tapis) մըն է<sup>17</sup>:

Անշուշտ Պողոս Պէյ Մըսըրլեանի Հայ կաթողիկէ աղջկանց կրթութեան համար ըրած աղջկանց այս մեծ բարեգործութիւնը կ'ակնարկուի Աւետիքի մէջ, երբ Անարատ Յղութեան Մայրապետներու 100ամեայ Յորհրդանի առթիւ խօսուած ճառի մը մէջ կը յիշատակուի թէ Բերայի հրդեհէն վերջ Անարատ Յղութեան նորընծայարանը փոխադրուած է «Սամաթիա, ուր Մարը Պողոս Աղայի առատաձեռնութեամբ տուն եւ վարժարան բացուած էր<sup>18</sup>»:

Այս մասին կարեւոր լոյս կը սփռէ Ժ. Գարու Հայ Կաթողիկէ Համայնքի Պատմութեան ամենահմուտ Հեղինակ՝ Գեր. Յովհաննէս Արքեպ. Նազլեան՝ իր «Պատմական Տեսութիւն Անարատ Յղութեան Հայ Բոյրերու Միարանութեան» հոյակապ գործին մէջ, ուր Անարատ Յղութեան Միարանութեան Պոլսոյ

<sup>15</sup> Օրագիր, Կ. Պ. 1869, թ. 31:  
<sup>16</sup> Մասիս Օրագիր, Կ. Պ. 1869, թ. 409:  
<sup>17</sup> Փուլզ Օրագիր, Կ. Պ. 1869, թ. 393:  
<sup>18</sup> Աւետիք, Պէյրութ 1947, էջ 229:

մէջ ունեցած աներու վրայ խօսելով՝ կը գրէ. «Պէյութե Տէրէէ հնազոյն է իրրեւ վարժարան Սամաթիոյ Տունը: Սա բացուած է 1868ին նուիրատուութեամբ Պողոս Պէյ Մարիանի, որ... Կ. Պոլսոյ Աթոռին եւ Մայրապետներու մեծագոյն բարեարմենի մին եղած է: Սա Պալատի լուսնայախոյնեթէն եղած է եւ վաւորի Ծոգեմաւային Ընկերութեան Տնօրէնի պաշտօնովը մանաւանդ՝ մեծ ազդեցութիւն ունեցած է Սուլթան Ազիզի մօտ... 1868ին կ'ընդունի 280 քանակ ոսկի՝ Սամաթիոյ աղջկանց վարժարան մը բանալու համար եւ անով կը գնէ Մանուէլեան Պողոս Պէյի տան կից 1850ին կառուցուած շէնք մը իր հողովը: Հիւրմիտեան Եղուարդ Արքեպ., Վեհապիկի Մխիթարեաններէ... որ այդ միջոցին հոն կը գտնուէր, կ'օրհնէ նոր տունը եւ կը կատարէ բացումը: 1881ին այդ վարժարանը տաղնապ մը անցուցած է աշակերտներու նուագութեամբ, որուն համար թելագրած էր Ազարեանի Կարդ. Հասուն՝ զայն փակել վարձու տալով չէնքը» (Պատմական Տեսութիւն Անարատ Յղութեան Հայ Բոյրերու Միարանութեան վրայ. Պէյրութ 1948, էջ 215-216):

Պողոս Պէյ Մըսըրլեանի գաւակը՝ Օննիկ Պէյ չի հաւանիր վարժարանի փակումին (անդ, էջ 102), անշուշտ յարգելու համար հօրը նուիրական կտակը: Վարժարանը 1881էն վերջ ալ շարունակած է պահել իր դոյութիւնը:

Պողոս Մըսըրլըի Հայ կրթական գործին հանդէպ ունեցած մեծ սիրոյն մէկ արտայայտութիւնն ալ կայ, որ դժբախտաբար մոռացութեան ենթարկուած է: Երախտագէտ ըլլալու ենք դարձեալ ժամանակակից թերթի մը — Օրագրին — որ գոնէ յիշատակութիւնը ըրած է Պողոս Մըսըրլեանի այդ մէկ բարեարութեանն ալ:

Պոլսոյ Օրագիր (1871, թ. 504), առանց ճշգրտութեամբ ծանօտանալու ու պարագաները՝ կ'ըսէ որ Պողոս Մըսըրլեան հայ աղջկանց վարժարան մը բացած է նաեւ Պոլսոյ Զէյթուն Պուռնու կոչուած թաղին մէջ: Օրագրի խօսքերէն այնքան միայն կը հասկնուի որ Պողոս Մըսըրը Զէյթուն Պուռնուի մէջ աղջկանց վարժարանը բացած է՝ Սամաթիոյ աղջկանց վարժարանը բանալէ անմիջապէս վերջ: Ուրեմն կա'մ 1868ի վերջը եւ կա'մ 1869ի սկիզբը:

Պոլիս հարցում ընելով՝ հետեւեալ տեղեկութիւնը ստացած ենք. Զէյթուն Պուռնու

գիւղ մըն է, քաղաքէն դուրս, Եւրոպայի բաժնին վրայ, Սիրքէճի կայարանէն՝ 7րդ կայանը՝ (չոգեկառքի)։ Այժմ Զէյթուն Պոլսուն ունի զպրոց կայ, ո՛չ կաթողիկէ եկեղեցի։ Հաւանական է որ 1870ական թուականին հոն զպրոց մը եղած ըլլայ, բայց ո՛վ գիտէ ո՛ր տարին գոյուած կամ տէրութեան ձեռքն անցած է։

Դիտած ենք որ Պօղոս Պէյ եւ իր սերունդը լաւ կապ եւ յարաբերութիւն պահած են Ազգայիններու հետ, ինչ որ Մըսըրլեանց ազգասիրական զգածումը կ'արտայայտէ։

1866ին Պրոսայի Առաջնորդ Գէորգ Արքեպիսկոպոսը Էջմիածնի Կաթողիկոս ընտրուած ըլլալով՝ Պոլիս հրաւիրուած էր։ Հայ Կաթողիկէ Համայնքի բարձրաստիճան անձինքներու կողմէ նորընտիր Կաթողիկոսի շնորհաւորութեան կ'երթան «Մըսըրլեան վսեմաշուք Պօղոս Պէյն եւ Բէօզեան մեծապատիւ Յակոբ էֆէնտին», կը գրէ Մասիս<sup>19</sup>։

1868 Ապրիլին Պօղոս Պէյ Պետական հարկաւորի (Շուրայի Տէվլիթ) անդամ կ'անուանուի՝ առաջին կարգի երկրորդ աստիճանի պաշտօնատարութեամբ<sup>20</sup>։

1868ի վերջերը զէպի Եւրոպա ճամբորդութիւն մ'ըրած է։ Վերադարձին առթիւ Պոլսոյ Փունջ կը գրէ. «Պապականաց երեւելիներէն եւ Գեր. Հատուի խիստ համակիրներէն Մըսըրլեան վսեմ. Պօղոս Պէյը Եւրոպայէն դառնալու ատենը Ս. Պատրիարքին կողմէ վարդապետ մը անոր վերադարձը շնորհաւորել գացեր է եւ նորին վսեմութիւնն ալ ամիս մ'ետէր Գումգափուի Պատրիարքարանը իջնելով՝ փոխադարձ տեսութիւն մ'ըրեր է Ս. Պատրիարքին հետ<sup>21</sup>»։

Որքան Սրբազանի Պատրիարքական գահակալութեան ատեն ալ Պօղոս Պէյ շնորհաւորութեան գացեր եւ շատ յարգանքով ընդունուեր է<sup>22</sup>։

1870 Մարտին կը հրատարի Մայր Թագուհիի սեղանաւորութենէն, պաշտօն մը, զոր մօտ 10 տարի մեծ արժանաւորութեամբ վարած եւ չափազանց գոհ թողուցած էր։ Իր տեղ այդ պաշտօնը կը ստանձնէ ուրիշ Հայ կաթողիկէ բարձրաստիճան անձնաւորութիւն մը — Տիրան Պէյ Ալիբաշեան<sup>23</sup>։

Պօղոս Պէյի հրատարակած պատճառն այն էր որ աւելի բարձր պաշտօնի կոչուած էր. 1870ին կ'ընտրուի Մայր-Թագուհիի Գանձապետ։ Այս ուրախ առթիւ Պոլսոյ Մասիս կը տեղեկագրէ։ «Պետական հարկաւոր անդամ Մըսըրլը օրու Պօղոս Պէյը Բարձր. Մայր Թագուհոյն գանձապետ անուանեցաւ եւ այս առթիւ նորին բարձրութիւնն իր ձեռքով աւանակուա ընչատուփ մը շնորհեց Պօղոս Պէյին<sup>24</sup>»։

1871ին թուրք Պետական Խորհուրդի (Շուրայի Տէվլիթ) անդամներու թիւը իննսուգուրթեան համար 70էն 22ի կը զեղչուի։ Այդ 22 անդամներու մէջէն 6ը հետեւեալ Հայերն են. Միհրան Պէյ Տիւրքեան, Պօղոս Պէյ Մըսըրլեան, Վահան էֆ., Արթին էֆ. Տատեան, Յովհաննէս էֆ. Սաքըզ եւ Սարգիս էֆ. Ալաբէկեան<sup>25</sup>։

Ս. Աթոռի արտակարգ նուիրակ Ֆրանքի Պոլսէն մեկնումի առթիւ Պօղոս Պէյ կոչուած մը կու տայ իր տան մէջ<sup>26</sup>։

Վերջապէս 1872ի դարձան Պօղոս Պէյ կը պատկուի Պալայի ամենաբարձր պատուաստիճանով, աստիճան մը՝ որուն բարձրութեան շատ քիչ քրիստոնեաներ կրցած են հասնիլ։ Պոլսոյ Փունջ երկու խօսքով յիշատակած է ասիկա 1872 Մարտ 25ին տողելով. «Պալայի աստիճան տրուեցաւ Շուրայի-Տէվլիթի անդամ եւ բարձրապատիւ Մայր Թագուհոյն սեղանաւոր Մըսըրլեան Պօղոս Պէյին<sup>27</sup>»։

Օրագիր (1872, Թ. 789) կը գրէ որ «Վեհափառ Սուլթանը, ի նշան գոհունակութեան, վրան կայսերական թուղթոյով ահանակու մեծազին ընչատուփ մը շնորհեր է Մըսըրլեան Պօղոս Պէյին»։

Հոս կը ներկայացնենք Պօղոս Պէյ Մըսըրլեանի մէկ պատկերը, զոր հաճեցաւ մեկ տրամադրել Պոլսոյ Վեհակաւոր Արհիպսկապառ Պօղոս Արքեպ. Բիրէճեան։

Պօղոս Պէյ Մըսըրլեանի պետական եւ հասարակական կեանքի մասին գծուած այս հակիրճ տեսութիւնէն վերջ՝ համարօտ ահանարկ մ'ալ իր ընտանեկան կեանքի մասին։


Պօղոս Պէյ ամուսնացած է Վերոն Ծաւուտեանի (ծն. 1832 † 1872 Յունուար 27) հետ։ Ըստ Ղեւոնդ Թընկերեանի՝ Տիկ. Վերոն Ծաւուտեան դուստրն է Յովսէփ Ամիրա

<sup>19</sup> Մասիս, 1867, Թ. 786:  
<sup>20</sup> Փունջ Օրագիր, 1868, Թ. 140: — Արշ. Արաբառեան, Չմիւսնիս 1868, Թ. 830:  
<sup>21</sup> Փունջ Օրագիր, անդ. Թ. 211:  
<sup>22</sup> Տէ'ս Փունջ, անդ. 1869, Թ. 478:  
<sup>23</sup> Միւսնի, Կ. Պ. 1870, Թ. 120:

<sup>24</sup> Մասիս, 1870, Թ. 1037:  
<sup>25</sup> Փունջ, 1871, Թ. 687: — Մասիս, 1871, Թ. 1139:  
<sup>26</sup> Հայրենիք, 1872, Թ. 715:  
<sup>27</sup> Փունջ, 1872, Թ. 715:

Ծաւուտեանի (հայր՝ կարապետ Արքիմ Փաշա Ծաւուտեանի) եւ Պրիմիտ Թընկերեանի (դուստր՝ Յակոբ Ամիրա Թընկերեանի)<sup>28</sup>։ Այս ամուսնութենէն մեղի ծանօթ են 7 զաւակներ եւ բազմանդամ սերունդ մը, որոնց մասին յետոյ։

Որքան կ'երեւայ՝ Պօղոս Պէյ Տիկ. Վերոնէն առաջ ուրիշ ամուսնութիւն մ'ալ կ'ընած եւ այդ առաջին կինը կանխահաս մահով վախճանած է։ Այս ենթադրութիւնը կ'ընենք



Պօղոս Պէյ Մըսըրլեան

անոր համար որ մինչ Տիկ. Վերոն 1872ին 40 տարեկան մեռած ըլլալով (տէ'ս Բօսեան, Գերեզմանատուն, անդ. էջ 255) 1832ին ծնած կ'ըլլայ՝ հաւանական չէ որ մայրն ըլլայ Սրբուհի Մըսըրլեանի, որ Պօղոս Պէյի դուստրն է, մեռած 1856ին հնգետասանակայ (Բօսեան, անդ. էջ 255), հետեւաբար ծնած՝ 1841ին։

Պօղոս Պէյի առաջին ամուսնոյն մասին ոչ մէկ յիշատակութիւն կայ։ Ինչպէս Ս. Աստուածածին եկեղեցոյ մահաբձանը՝ նոյնպէս Պ. Ղեւոնդ Թընկերեան՝ Պօղոս Պէյ Մըսըրլեանի կին կը յիշատակեն միայն Տիկ. Վերոնը։

<sup>28</sup> Տես այս մասին մեր գիրքը. Գույումճեան եւ Թընկերեան Գերդատասանները, Վիեննա 1951, էջ 85:

Կրնայ երկրորդ հնարաւորութիւն մ'ալ ըլլալ։ Թերեւս Բօսեանի քով (անդ. էջ 255) յիշուած Սրբուհի Մըսըրլեան ո՛չ թէ 15 տարեկան, այլ 5 տարեկան մեռած ըլլայ։ Այս վերջին պարագային Տիկ. Վերոն կրնայ Սրբուհի Մըսըրլեանի ալ մայրն եղած ըլլալ։

Պօղոս Պէյ հաւանօրէն Պոլսոյ թաղերուն մէջ ընտանեկան տուն ունէր։ Իր ամառանոցը կը գտնուէր Պէօյիւֆտէրէ, ուր Անտոն Պէյ Մըսըրլեանի հետ շքեղ պալատներ կանդանած էր, պատրաստուելով ընդունել հոն Նապոլէոն Գ. կայսրն ու Էօփէնի կայսրուհին։ Պ. Ղեւոնդ Թընկերեան կը գրէ Պարիսէն. Les Yalis, plutôt des Palais construits par des architectes et des peintres de Paris dans des endroits «panorama» du Bosphore a Buyuk-Déré de Boghos et Andon Missirly avec le projet de recevoir Napoléon III et l'impératrice Eugénie dans leur résidences d'été. Magnifiques domaines avec parcs et fontaines.

Ամէնէն վերջը Պօղոսինը Ռուսիոյ դեսպանատան, իսկ Անտոնինը մեծահարուստ թուրքի մը ծախուած են։

1870ի Բերայի հրդեհին առթիւ կը յիշուի Պօղոս Պէյի Բաղկիդոնի սիրուն ամառանոցը, ուր հիւրասիրուած են հրդեհէն անպատասպար մնացած Անարատ Յղութեան Բոյրերը։ Եթէ անունի թիւրիմացութիւն մը չկայ — Բաղկիդոն՝ փոխանակ Պէօյիւֆտէրէի — պիտի ընդունինք թէ Պօղոս Պէյ ամառանոց մ'ալ Բաղկիդոն (Բատըքէօյ) ունեցած է։ Արհիպսկապառ Յովհաննէս Արքեպ. Նաղիան Գերապոյժառ՝ նկարագրելով 1870ի հրդեհին Անարատ Յղութեան Միւրանութեան հասցուցած մեծ վնասը՝ կը գրէ. «...Մայրապետներ խուճապով տնէն դուրս ելլելէ ետք, ո՛ւր պիտի երթան... ունին ծերեր, երիտասարդներ (նորընծայ եւ Բոյր), գիշերօթիկներ... Իրարանցումի մէջ թափառական կը մնան պահ մը փողոցներու վրայ։ Անլուր դժուարութիւններով կ'անցնին բոցերու եւ իրարանցումի մէջէն ու կը դիմեն Գլթութեան Բոյրերու՝ Ղալաթիա։ Ասոնց Մեծաւորուհի Մայրը սիրով կ'ընդունի գիրենք, կերակուր եւ անկողին պատրաստել կու տայ Բոյրերու եւ աշակերտուհիներու համար, սակայն ո՛չ ոք քուն կ'ըլլայ նոյն գիշեր։ Հետեւեալ առաւօտը Մարլը Պօղոս Պէյը կու գայ եւ ազնուութեամբ իրենց տրամադրութեան տակ կը զնէ Բաղկիդոնի իր սիրուն ամառանոցը։ Բոյրերը շնորհակալութեամբ կ'ընդունին մեծ բարե-

բարի այդ շնորհքը եւ փառք կու տան Աստուծոյ հոն պատուարեւելուն համար: Որովհետեւ Պօղոս Պէյի ազնիւ կողակիցը կը հիւրընկալէ զիրենք զուարթատաւ սրտով եւ անդորրացնելով թէ ամէն բան իր տեղը կու գայ... Պօղոս Պէյ բուրդ կը սրամազրէ եւ վերոն Տուտու քառասուն վերմակ կարել կու տայ՝ երկուքական փոռցով» (Յովհ. Արքեպ. Նազլեան, Պատմական Տեսութիւն Անարատ Յղութեան Հայ Բոյրերու Միարանութեան վրայ, Պէյրութ 1948, էջ 74—75):

Պօղոս Պէյ Մըսըրը մեռած է 1873 Ապրիլ 27ին, 61 տարեկան: Փունջի մէջ սխալմամբ 55 տարեկան ըսուած է: Այս թերթը 1873 Ապրիլ 28ին կը գրէ. «Հոռոճական (Հասունեան) ազգայնոց երեւիլներէն Մըսըրլեան Պօղոս Պէյ երէկ առաւօտ յանկարծամահ եղաւ, ի հասակի 55 ամաց: Այսօր պիտի կատարի յուղարկաւորութեան հանդէսը: Հանգուցեալն շատ ժամանակէ հետէ բարձրագատիւ Մայր Թագուհւոյն սեղանաւորութեան պաշտօնը կը վարէր<sup>29</sup>»:

Ո՛ւր թաղուած են Պօղոս Պէյ եւ Տիկ. Վերոն: Մասնաւոր յիշատակութեան մը չենք հանդիպիր: Մըսըրլեաններու կառուցած Ս. Աստուածածին Մայր-Եկեղեցւոյ մէջ Մըսըրլեանները շիրիմ ունեցած են, ուր որոշ կերպով կը յիշատակուի որ թաղուած են Լուցիա եւ Սոփիա Մըսըրլեանները: Ըստ Ղեւոնդ Թընկերեանի՝ մինչեւ 1940 Մըսըրլեանք Ս. Աստուածածին իրենց շիրիմ մէջ թաղուած են: Մըսըրլեաններէն առաջինը, որուն թոյլ չէ տրուած ընտանեկան շիրիմ մէջ թաղուել՝ Տիկ. Թագուհին է, մեռած 1941: Վերջինս թաղուած է Շիշլիի գերեզմանատունը: Ահա Պր. Թընկերեանի խօսքերը: Le caveau de la famille (Missirly) se trouve à l'Eglise (Ste Marie) même. Mais depuis la mort Mme Takouhi Missirly l'enterrement en pleine ville a été interdit par le gouvernement turc. Elle a été inhumée au cimetière de Chichli.

6. Աղանի Մըսըրլեան. — Մարտիրոս Մըսըրլեանի դուստր՝ Աղանի ծնած 1814ին՝ ամուսնացած է Գրիգոր Մազարեանի (ծն. 1809 † 1875 Օգոստ. 18) հետ, որմէ ունեցած կ'երեւայ 4 աղջիկ. 1. Սուրբիկ (ծն. 1844 [1843] Մարտ 28 † 1909 Յունիս 11/24), որ

ամուսնացած է Անտոն Ազարեանի (ծն. 1837 Յունուար 17ին † 1898 Մայիս 6ին) հետ<sup>30</sup>. 2. Աննա († 1848 Սեպտ., 3 տարեկան). 3. Մարիամ (ծն. 1849 † 1912 Մայիս 26ին), որ ամուսնացած Անտոն Ազնաւորեանի (ծն. 1841 † 1915) հետ՝ ունեցած է զաւակներ, որոնցմէ ծանօթ է աղջիկ մը՝ Լիւսի:

Անտոնի եւ Մարիամի տապանադիրները երկկեղուեան կ'արտադրենք.

Աստ հանգչի  
Անտոն Ազնաւոր  
1841—1915

ici Repose  
Andon Aznavour  
Priez pour lui

Dieu misericordieux  
Donnez la paix éternelle  
A notre mère chérie et  
A nous votre grâce  
Pour soulager notre  
Peine extrême

Մարի Ազնաւորեան  
ծն. 1849 վիս. ի 26 Մայիսի 1912  
Սիրեցեալք իմ Մարի  
Ծնար հրեշտակ, եղեր մարտիրոս, եւ  
այժմ հրեշտակ: Արդ խոնարհեալ ի  
համբոյր շիրիմիդ, առողանեմ արտասուօք  
զտապանն ուր հանդչին  
մասունք քո

Ամուսին քո անմխիթար:

Ma douce compagne  
tu fus un ange, une martyre, une  
sainte! Je vénère ta tombe bénie, et  
j'arose de mes larmes le berceau  
où reposent tes reliques.  
Ton infortuné époux<sup>31</sup>.

Անտոն եւ Մարի Ազնաւորեան կանուխէն  
կորսնցուցած են իրենց դուստրը՝ Լիւսի,  
որուն կը ձօնեն աղեխարթ տողերս.

<sup>29</sup> Հ. Յակոբ Ծ. Վ. Քօսեան, Գերեզմանատուն  
Կաթողիկէ Հայոց Կ. Պոլսոյ, Վիեննա 1931, էջ 104  
և 255:

<sup>31</sup> Հ. Յ. Ծ. Վ. Քօսեան, անդ՝ էջ 142—143:

<sup>29</sup> Փունջ, 1873, թ. 784: — Հմմտ. Մասիս,  
1873, թ. 1378:

O mon Dieu  
Vous m'avez donné un  
ange pour fille, hélas  
trop vite rapellée à vous  
Seigneur. Ma douleur est  
extrême, prenez en pitié  
une mère éplorée.

Օր. Լիւսի Ազնաւոր  
Գուստր Անտոնի եւ Մարեմայ  
ծն. 31 Յունիս 1873 † 3 Փետր. 1907

Բարի գործովք բեղմնաւոր տարեցաւ կեանք  
վաղանցուկ

Առաքինի զօծութեամբ հայրենի տան կաց  
նեցուկ

Սէրն առ ծնողս եւ ընկերն անձնութիւնն  
անպայման

Ընծայեցին հաճելի զինք Աստուծոյ եւ մարդ-  
կան.

Առ սիրեցեալք իմ Լիւսի  
Թեւս հոգմոց սրացիկ հառաչանք սրտիս իմ  
անկեղծ

Իցի՛ւ զի քեզ հասուցեն՝ զհամբոյր եւ սէր  
իմ անկեղծ.

Ո՛հ ոչ եւս ինձ խինդ, հրճուանք, այլ այս  
իմ կոծ անդադար

Հանդիր դատրիկ նազելի, աչք իմ շերտովդ  
հսկեն յար

Հայր քո անմխիթար

Puissent mes soupirs comme une légère  
brise  
Te porter, mes baisers, ma tendresse  
Oh! que ma voix plaintive le dise.  
Dors ma fille! Je veille sur toi sans cesse.  
Ton père inconsolable<sup>32</sup>.

Աղանի Մըսըրլեանի չորրորդ աղջիկն է  
Հոփիսիմէ, որ 1854 Ապրիլ 24ին մեռած է  
տանութիւն տարեկան<sup>33</sup>: Ինքը Աղանի մե-  
ռած է 1873 Յուլ. 14ին:

7. Վառվառէ-Բուրուլ Մըսըրլեան. —  
Մարտիրոս Մըսըրլեանի կրտսեր զաւակը՝  
Վառվառէ-Բուրուլ (ծն. 1819 † 1881 Մարտ 4)  
ամուսնացած է Պիլէգիկեանի մը հետ եւ  
ունեցած 2 զաւակ. 1. Մարիամ († 1869  
Ապրիլ 22) եւ 2. Գրիգոր († 1875 Յունիս 1):

<sup>32</sup> Հ. Յ. Ծ. Վ. Քօսեան, անդ՝ էջ 143—144:  
<sup>33</sup> Անդ՝ էջ 254:

Ե. ՄԸՍԸՐԼԵԱՆԻ — ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

Պոլսոյ Հայ Կաթողիկէ Համայնքը ունեցած է, հինէն ի վեր, շատ ու շատ բարերարներ, փայլուն՝ մէկը միւսէն աւելի: Կոթողական է սակայն այն, զոր Մըսըրլեան Գերդաստանը Ազգին ըրած է: Բերա, Սաքըզ-Աղաճի Աթոռանիստ Ս. Աստուածածին Մայր-Եկեղեցւոյ եւ անոր կից Հայրապետանոցի շինութիւնները Ազգը կը պարտի Մըսըրլեան Տան: 1870ին Բերայի մեծ հրդեհը զժրարտարար լափած է Հայրապետանոցի շէնքերը, բայց Ս. Աստուածածին Մայր-Եկեղեցին, որ հրաշքով մը փրկուած է՝ դարուցի դարս պիտի պատմէ շերտաշերտ կրօնասիրութեան մեծագործութիւնը Հայ Կաթողիկէ ազնիւ Գերդաստանին:

Անցնինք մանրամասնութիւններու:

Բերա, Սաքըզ-Աղաճ Աթոռանիստ Ս. Աստուածածին Մայր-Եկեղեցւոյ գանձուած տեղը՝ իր շուրջը եղած չնքերով՝ հին ատեն ընդարձակ դետին մ'եղած է, որուն վրայ միայն փայտաչէն տուն մը կը գտնուէր: Այդ ամբողջ գետինը սեպհականութիւնն է եղած Պօղոս Աղա Պիլէգիկեանի, որ 1838ի ատենները ամբողջութեամբ կը նուիրէ Հայ Կաթողիկէ Պատրիարքարանին: Հին փայտաչէն տունը դպրոցի գործածուած է սկիզբէն մինչեւ վերջը, բարեփոխութիւններով ու նոր շինուածքներով<sup>34</sup>: Իսկ մնացած գետինին վրայ 1865ին կը կառուցուի Ս. Աստուածածին Աթոռանիստ Մայր-Եկեղեցին: Եկեղեցւոյ այս շինութիւնը եղած է Մըսըրլեանց երկու սրբասէր քոյրերու — Լուցիայի եւ Սոփիայի — եւ իրենց երկու եղբայրներու՝ Պետրոսի եւ Պօղոսի նիւթական ծախքով: Եկեղեցւոյ շինութեան ատեն Պօղոս Պէյ ողջ ըլլալուն եւ գործին գլուխ կանգնելուն՝ ընդհանրապէս այս շինութիւնը Պօղոս Պէյին վերագրուած է: Հ. Սահակ Վ. Սրապեան կը գրէ. «1865ին շինուեցաւ Ս. Աստուածածին Աթոռանիստ Եկեղեցին բարերարութեամբ Մըսըրլեան Պօղոս Պէյի»<sup>35</sup>: Թորգոմեան ալ կը գրէ. «Հայ Կաթողիկէ Ս. Աստուածածին Եկեղեցին, զոր կառուցած է 1865ին Մըսըրլեան Պօղոս Պէյ՝ իր զամբարան իւր գերդաստանին»<sup>36</sup>: Մինչդեռ ժամանակակից Հայ կա-

<sup>34</sup> Հ. Սահակ Վ. Սրապեան, Ս. Յակոբ Ազգային  
շինանոց, Վիեննա 1915, էջ 184, ծանօթ. 1:

<sup>35</sup> Անդ:

<sup>36</sup> Տօքթ. Վահրամ Յ. Թորգոմեան, Երեմիա Զէ-  
լէպիլի Քէօմիւրճեան Ստամբուլոյ Պատմութիւն, Բ.,  
Վիեննա 1932, էջ 570:

թողիկէ թերթը — Մէնուայը Հավատիս — որոշ կերպով կը շեշտէ որ եկեղեցւոյ շինութեան մէջ կարեւոր բաժին ունին Պօղոս Պէյլի վերոյիշեալ քոյրերը եւ Պետրոս եղբայրը: Ատկէ զատ եկեղեցւոյ մէջ յատուկ Յիշատակարան — արձանագրութիւն կայ, որ կը հաւաստէ թէ եկեղեցւոյ մէջ ալ թաղուած են Լուցիա եւ Սոփիա: Այդ Արձանագրութիւնը պիտի տանք յետոյ:

Մէնուայը Հավատիս ժամանակակից թերթը աւանդած է թանկագին մանրամասնութիւններ Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ Պատրիարքարանի շինութեանց մասին: Դժբախտաբար կարելի չէ բառացի յառաջբերութիւն ընել՝ զրուած ըլլալով բարձր քրքրեմով մը: Կու տանք թարգմանութիւն մը՝ քաղաքացիները:

Եկեղեցւոյ շինութիւնը եւ օծումը

Մէնու. Հավատիս կը գրէ.

Պետրոս Մըսրիը ամէնէն առաջ ունեցած է ծրագիր կաթ. Համայնքի համար Մայր եկեղեցի եւ Պատրիարքարան շինելու. սակայն մահը վրայ հասնելով՝ չէ կրցած գլուխ հանել իր փափակն ու ծրագիրը: Իր ամբողջ հարստութիւնը կ'ուզէր տրամադրել գլխաւորաբար այս եկեղեցւոյ շինութեան:

Այս ծրագիրը կը զործադրէ եղբայրը՝ Պօղոս Պէյլի՝ յարգելով իր եղբոր յիշատակը: Ինքը (Պօղոս Պէյլի) եւ իր երկու սրբապետ քոյրերը (Լուցիա եւ Սոփիա) կրցեցին 1865 տարւոյ Փետրուարին կրօնական մեծ հանգիստով մը հիմը դնել եկեղեցւոյ շինութեան: Աստուծոյ օրհնութեամբ բոլոր զժողովուրդները զիբարցած եւ լաւ վերջաւորութիւն մը ունեցած է սկսուած գործը:

Միեւնոյն տարին սկսուած է շինութիւնը թէ՛ Եկեղեցւոյն եւ թէ՛ Հայրապետանոցին:

Ասոնց շինութիւնը Նախագահ Հասունեան Գերապայծառի կողմէ հայ կաթողիկէ ճարտարապետ Անտոն Թիւլպէնտեանի յանձնուած է: Անտոն Թիւլպէնտեան շատ ճարտար արուեստագէտ է. այնպէս շինած է այդ երկու շէնքերը որ բոլորը, որոնք տեսան՝ հիացան իր վարպետութեան վրայ: «Ո՛ր կողմը նայիս՝ առաւելութիւն մը, գեղեցկութիւն մը, կատարելութիւն մը եւ արուեստով շինուած ըլլալը կը տեսնես»:

Օծումը կատարուեցաւ բացառիկ հանդիսաւորութեամբ 1866 Նոյեմբեր 6 Կիրակի

օրը<sup>37</sup>: Այդ օրը առտուն կանուխէն ժողովուրդը խուռնեցած եկեղեցի դիմած եւ բերնէ բերան լեցուցած է թէ՛ եկեղեցին, թէ՛ դաւիթը եւ թէ՛ դուրսը՝ եկեղեցւոյ շրջապատը: Մեծ թուով ոստիկանութիւն՝ իրենց մեծերով՝ ներկայ եղած են: Հանդիսութեան ներկայ եղած է Պետական բարձր պաշտօնէութիւն, մասնաւորապէս ծովակալութեան կողմէ: Ներկայ էին նաեւ Սուրբ Թադեւոսի պաշտօնէաները, Հայ կաթողիկէ Համայնքի Պետերը, ինչպէս նաեւ ուրիշ Համայնքներու Պետեր. Ֆրանսայի Գործախատարը, զեսպանատան ատաշին թարգմանը. Աւստրիոյ զեսպանատան թարգմանը. Յունաց ազգէն՝ Նիքիթաքի, Չարիֆի եւ Սթեֆանովիչ. Հայ Ազգի կողմէն՝ Գէորգ Պարտիզպանեան, Յակոբ Մուպայիսեան, Միսաք Վարդերեսեան, Սիմոն Պէյ Մաքսուտեան եւ Հաճի Մազաք Մուրատեան:

Սուրբանը պատիւ ընելու համար՝ զրկած էր պաշտական զինակիր բարձրաստիճան կաթողիկէ անձեր:

Ո՛չ մեր ազգին եւ ոչ ալ ուրիշ որեւէ քրիստոնեայ ազգի մը մէկ հանդիսութեան այսքան մեծ քանակութեամբ եկեղեցականներու հաւաքում տեղի չէ ունեցած: Ներկայ էին. Լատին Արքեպ. Պրոննի, Սուրբաշիներու Պատրիարք՝ Իգնատիոս Արքեպ., Լատին Եպիսկոպոսներէն Թրիոշ Եպ., Հալէպի ասորի Արքեպ. Դիոնիսիոս, յոյն կաթողիկէ Արքեպիսկոպոսներէն Մէլէցիոս Արքեպ. եւ Բենիամին Եպ., Անթէքիոյ Արքեպ. եւ Անթոնեան Միաբանութեան Արքայ՝ Սուքրաս Գազանճեան Գերապայծառ, Թեմական Արքեպիսկոպոսներէն՝ Ամատիոյ Առաջնորդ Իգնատիոս Արքեպ. Ղալպուսեան, Կեսարիոյ Առաջնորդ Յովհաննէս Եպ. Հաճեան, Կիպրոսի Առաջնորդ Բարսեղ Գասպարեան Գերապայծառ, բուլղար կաթողիկէ կղերի Պետ՝ Ռաֆայէլ Արքեպ., լատին Մերտիթներու կղերական Քրազնիկ, Ստեփան Ազարեան Գերապայծառ եւ լատին եկեղեցիներու Մեծաւորները, Վենետիկի, Վիեննայի եւ Լիբանանի վարդապետները, եւ այլն, եւ այլն:

Եկեղեցւոյ օծումը սկսելու համար Գերապայծառ Անտոն Արքեպ. Հասունեան Նախագահ հանդիսական մուտք գործեց՝ հա-

<sup>37</sup> Սխալ է հետեւաբար թարգմանի զրոյսը թէ օծումը կատարուած է 1866 Սեպտեմբերին (տե՛ս Երեմ. Չէլէպ. Քէօմիւրճեան Ստամպուլի Պատմ., Բ., էջ 570):

դուած Ֆրանսայի Կայսրուհին կողմէ նուիրուած ծանր եւ փառաւոր եկեղեցական զգեստները, ինչպէս նաեւ Մըսրիւան Գերապատանին ընծայած թանկագին եկեղեցական սպասներով զարդարուն:

Նախ եկեղեցւոյ բակին մէջ թրքերէն լեզուով աղօթք եւ մաղթանք տեղի ունեցաւ Վեհ. Սուլթանի եւ կայսերական տան եւ ամբողջ երկրին համար. յետոյ 350 աղջիկ եւ մանչ զպրօցական տղաք երգեցին եկեղեցական երգեր եւ աղօթքներ: Ատկէ վերջ Նախագահ Հասունեան հայկական ծէսով եկեղեցւոյ օծումը կատարեց, որ 2 ժամ տեւեց: Յաւարտ օծումին՝ սկսաւ հանդիսական Չայնաւոր Պատարագը Հասունեան Կաթողիկոսի հանդիսազրուութեամբ:

Աւետարանէն վերջ՝ ընտիր թրքերէնով քարոզ մը տուաւ Կոնստ. Վ. Մարկոսեան<sup>38</sup>: Իսկ Պատարագէն վերջ՝ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Պետրոս Մըսրիւանի հողւոյն համար, որմէ յետոյ Հայրապետանոցը ելլելով՝ նախ տնօրհնէքի աղօթքներ կ'անէ եւ ապա ընդունելութիւն, շնորհաւորութիւններ եւ պատուասիրութիւններ տեղի ունեցան եւ բոլորը մեծ գոհունակութեամբ բաժնուեցան:

Այս առթիւ Պօղոս Պէյլի առատ նուէրներ բաժնած է 350էն աւելի աղջիկ եւ մանչ զպրօցականներու. աղքատներու յատկացուած պնակէն եւ իր կողմէ աւելցուած զուճարով, այդ օր, աղքատներու բաշխած է 5000 դրոշ՝ արտակարգօրէն գոհունակութիւն պատճառելով բոլորին:

Ամէն մարդ կը վկայէր թէ Տանկաստանի մէջ այսպիսի կրօնական մեծ հանդէս տեսնուած չէր: Հայ կաթողիկէ Նախապետը երեսակայեղ անգամ չէին կրնար թէ օր մը այսպիսի բան մը կարելի պիտի ըլլայ:

Յայտնի է թէ այսպիսի գեղեցիկ գործի մը այսքան յաջողութեամբ գումար ելլելը՝ կը պարտինք թէ՛ Պօղոս Պէյլի եւ թէ՛ իր երկու հոյրերուն՝ Լուցիայի եւ Սոփիայի:

Նկարագրութիւն Եկեղեցւոյ


Եկեղեցւոյ ներքինը, աւանդատունը, մկրտարանը եւ գաւթը 1563 կանգուն է. եկեղեցւոյ լայնքը՝ 16½, երկայնքը 46½ եւ բարձրութիւնը 28 կանգուն է: Եկեղեցին շինուած է կորնթական ճարտարապետու-

<sup>38</sup> Գարոզը տե՛ս Մէնու. Հավ. 1866, Թ. 671:

թեամբ: Աշխատաւորներու մէջ շատ մը մասնագէտներ գտնուած են:

Աւագ խորանը շինուած է 4 բարձր սիւներով եւ իր աջ ու ձախ կողմը երկերկու խորան ունի: Ասոնց պատկերները ամէնքն ալ Հոռոմի արուեստագէտներու կողմէ նկարուած են:

Հոս կու տանք Ս. Աստուածածին Մայրեկեղեցւոյ Աւագ-Սորանի պատկերը ճիշդ ա՛յն միջոցին, երբ — 1869ին — Ֆրանսայի Էօթէնի Կայսրուհին Պոլիս հիւր եղած ատեն՝ կիրակի մը՝ Հասունեան Կաթ. Պատրիարքի հանդիսական Չայնաւոր Պատարագին ներկայ է: Այդ առթիւ Սուլթանը եւ Մայր-Թաղուհին ջանացած էին փառաւորապէս զարդարել այս Եկեղեցին: Անարատ Յիշատակ:



Ս. Աստուածածին եկեղեցի 1869ին

Բոյրերու յանձնած էին բեհեղայ պատատուներու, մանաւանդ Կայսերական գահաւորակի չքեղ ասեղնազորութեան պատրաստութիւնը: Այդ Գահի մանաւանդ ոսկեհուն գինանշանը Ֆրանսայի Կայսերական Տան՝ չքեղ գլուխգործոց մ'եղած է նրբահիւս արուեստական ձեւարուեստի (Յովհ. Արքեպ. Նազկեան, Պատմական Տեսութիւն, անդ՝ էջ 69—70):

Եկեղեցին Ս. Աստուածածինի նուիրուած ըլլալուն՝ աւագ խորանի պատկերն ալ Ս. Աստուածածինը կը ներկայացնէ: Աջ կողմի առաջին խորանը ունի Պօղոս-Պետրոսի պատկերը. երկրորդը՝ Ս. Լուչիա եւ Ս. Սոփիա կոյսերու պատկերը: Չախ կողմի առաջին խորանը ունի Ս. Մարտիրոսի, իսկ երկրորդը՝ Ս. Վառվառէ եւ Ս. Աղանի կոյսերու պատկերը:

Ինչպէս կը տեսնուի՝ խորաններու սուրբերը կը կրեն Մըսրիւաններու ընտանիքի ողջ եւ մեռած անդամներու անունները:

Աւագ խորանի նկարը գործն է Սուքիե-  
րոյի, իսկ միւսները՝ Թէրիմէլիի եւ Մաննո  
անունով նշանաւոր վարպետներու:

Եկեղեցւոյ բակին մէջ մեծ եւ ամուր  
ջրամբար մը կայ, որուն շինութիւնը 1865  
Յունուարին սկսած եւ 1866 Օգոստ. 15ին  
աւարտած է:

Հայրապետանոցը

Եկեղեցւոյ ետեւը եւ կից եղած շէնքը կը  
ներկայացնէ Հայրապետանոցը, որուն գետնի  
ամբողջական տարածութիւնն է 590 կանգուն:  
Վրայէ վրայ չորս յարկ ունի եւ բարձրու-  
թիւնը 24 կանգուն է: Առաջին յարկին մէջ  
է գրասենակը եւ ասոր քովը ծառաներու  
սենեակները, ամէնը միասին՝ 6 սենեակ:  
Երկրորդ յարկին մէջն են Աթոռակալը եւ իր  
Ընդհ. Բարտուղարը, ինչպէս նաեւ մեծ սե-  
ղանատուն մը: Ամբողջը՝ 8 սենեակ: Երրորդ  
յարկը՝ բուն Հայրապետանոցն է. ունի 7 սե-  
նեակ: Իսկ չորրորդ յարկը՝ կը բովանդակէ  
ժողովարանը, 220 կանգուն տարածու-  
թեամբ, քովն ալ 4 սենեակ: Գետնայարկը,  
որ կամարածեւ շինուած է՝ դիւանական  
գրութիւններու յատկացուած սրահ մը կայ,  
ասիէ զատ 200 կանգուն տարածութեամբ ու-  
րիշ մասաններ շինուած են:

Հայրապետանոցի այս խոշոր շէնքը սկսած  
է շինուիլ 1865 Ապրիլ 4ին եւ աւարտած է  
1866 Օգոստ. 15ին:

Վարդապետանոց, գրատուն, տպարան

Այս շէնքը Հայրապետանոցին քովը կը  
գտնուի եւ ունի 530 կանգուն տարածութիւն:  
Ան այժմ 3 յարկ է եւ 15 կանգուն բարձրու-  
թիւն ունի: Առաջին յարկը կամարածեւ է,  
ուր կան խոհանոց, լուսցարան եւ ուրիշ մա-  
ռաններ: Երկրորդ յարկը՝ տպարան, գրա-  
տուն եւ ուրիշ 6 սենեակներ: Երրորդ յարկը՝  
քահանաներու համար 10 սենեակներ ունի:  
Այս շէնքին շինութիւնն ալ 1865 Նոյեմբերին  
սկսած՝ 1866 Օգոստ. 15ին վերջացած է:

Կալուած

Ասիկա 260 կանգուն գետնի վրայ քարա-  
շէն տուն մըն է, 5 յարկով, 25 կանգուն  
բարձր եւ 16 սենեակ ունի: Վարի յարկը կա-  
մարակապ՝ 2 մասն ունի: 1865 Նոյ. 15ին  
սկսած եւ 1866 Օգոստ. 15ին աւարտած է:

Այս բոլոր շէնքերուն տարածութիւնն  
եղած է 2100 կանգուն եւ 5—6 յարկի վրայ  
շինուած շէնքեր են, որոնք 1½ տարուան ըն-  
թացքին աւարտած են:

Հարկ է շէնքել որ հակառակ այնքան  
տարածութեամբ ընդարձակ շինութեան եւ  
զեղեցիկ արուեստով շինուած ըլլալուն՝ շատ  
աժան գնով եղած է եւ ասիկա կը պարտինք  
3 յատկութիւններու. 1. Ուշադրութեան,  
2. Ճարպիկութեան եւ 3. Խղճմտութեան:

Ուշադրութեան պատիւը կը վերաբերի  
Նախագահ Հասունեանի. մէկուկէս տարիէ  
ի վեր իր հանդիստը, անողջութիւնը եւ օդա-  
փոխութիւնը մոռցած՝ այդ խոշոր շէնքերուն  
ամէն մէկ պղտիկ մանրամասնութեան ուշա-  
դիր եղած եւ լաւադոյն յաջողութեան հաս-  
ցուցած է: Ճարպիկութեան պատիւը կը վե-  
րաբերի Անտոն Թիւլպէնտեանի, որ Ազգին  
եւ մեր երկրին մէջ ընտիր գործերու հեղինակ  
եղած է: Այս շէնքերուն զեղեցիկութիւնը՝  
իրենց մեծութեան մէջ եւ այնքան աժան ըլ-  
լալու վարպետութիւնը իրեն ճարպիկութիւնն  
է, իրեն միայն յատուկ: Մեր Ազգին պատի-  
ւը բերէ այսպիսի արուեստագէտ եւ մասնա-  
գէտ անձ մը ունենալը: Խղճմտութեան պա-  
տիւը կը վերաբերի այն պաշտօնեաներուն,  
որոնք իրենց յանձնուած գրամները խղճամբ-  
տօրէն գործածած են:

Շինութեան վարպետները

Շէնքերու ձուլիչն է Հոնա Մազուլ, *ճա-  
րակոմներու վարպետը՝ Մ. Վուգալովիչ, քա-  
րակոմներու գլուխը՝ Հոնա Էֆքասար*<sup>39</sup>:

1870 Մայիս 24ին Բերայի մեծ հրդեհէն  
կ'սրբի Մըսըրլեաններու կառուցած Հայրա-  
պետանոցը իր յարակից բոլոր շէնքերով.  
միայն Ս. Աստուածածին Մայր-Եկեղեցին  
հրաշքով մը ազատ կը մնայ այն ահռելի  
հրդեհէն<sup>40</sup>:

1870 Օգոստոսին Փունջ<sup>41</sup> կը գրէ որ  
«Լուր կայ քէ Մըսըրլեան Պօղոս Պէյ իւր  
անձնական գանձէն պիտի շինէ Պէյօղլուի

<sup>39</sup> Մէմուլարը Հավատիս, Կ. Պ. 1886, Թ. 671—  
672: <sup>40</sup> Թորոմեան, Երեւ. Չէլէպ. անդ՝ Բ., էջ 570—  
571: — Այրած էր միայն Մկրտարանը՝ առանց ուրիշ  
փնտրի: Կրակէն խնայուած էին նաեւ Գիւանի կամա-  
րակապ<sup>2</sup> սենեակները, որ կը պահուէր Ս. Գրիգոր  
Լուսաւորչի մեծ մատենքը (Յովհ. Արքեպ. Նազլեան,  
Պատմական Տեսութիւն Անարատ Յղութեան Հոյ Բոյ-  
րերու Միարանութեան վրայ, Պէյրութ 1948, էջ 75):  
<sup>41</sup> Փունջ, Կ. Պ. 1870, Թ. 629:

հռովական ազգայնոց հրկիզեալ պատրիար-  
քարանք»:

Որչափ զիտենք՝ Պօղոս Պէյ երկրորդ  
անգամ շինած է Պատրիարքարանը:

Այժմ յառաջ բերենք Բերա, Սաբըր-  
Աղաճի Ս. Աստուածածին Մայր-Եկեղեցւոյ  
մէջ եղած Մըսըրլեան Գերդաստանի Մահար-  
ձան-Յիշատակարանները: Քօսեանի յիշած  
4 մահարձաններէն մին Աղաբեան Կաթողի-  
կոսի կը վերաբերի, զոր շէնք տար հոս: Քօ-  
սեան կը գրէ.

«Ս. Աստուածածին՝ Մայր Եկեղեցւոյ  
մէջ կը գտնուին հետեւեալ մահարձանները,  
որոնցմէ երկուքն Եկեղեցւոյն ներքին որմե-  
րուն մէջ հաստատուած են, եւ երկուքն ալ  
արտաքուստ աւագ դրան ալ ու ձախ կողմը  
հաստատուած .

Որք ոչ խնայեցին զգանձա երկրաւորս  
ի կանգնել ի հիմանց եւ գարդարել գտանարս  
սուրբ

Նուիրեալ յանուն Անարատ Կուսին  
Մարիամու Աստուածածնի  
ի 6 Նոյեմբ. 1866

Լուցիա եւ Սովիա սրբաւէր քոք Մարիան  
Անուանք ցոցա եւ ցնչեցելոցն ծնողաց եւ  
ընտանեաց

Արձանագրեալ աստէն յաւելուն պարծանս  
Բարեպաշտ տոմին.

Լուցիա Մարիան դուստր Մարտիրոսի  
Մինն ի հիմնադրաց Եկեղեցւոյս  
Վախճանեալ ի 19 Գեկտ. 1867 ամաց 60.  
Հանգչի ընդ հովանեաւ սրբոյ տանարիս,  
Սովիա Մարիան դուստր Մարտիրոսի  
Միսն ի հիմնադրաց Եկեղեցւոյս  
Վախճանեալ ի 14 Մարտի 1887 ամաց 76  
Հանգչի ընդ հովանեաւ սրբոյ տանարիս:

Յաւերժացի եւ յիշատակ Պետրոսի Մարիան  
որդոյ Մարտիրոսի

Եւ Քերց ցոցա եւ սոցին գաւակաց որք ցնչե-  
ցին ի Տէր.

Պետրոս Մարիան որդի Մարտիրոսի  
յ30 Հոկտ. յամի 1862 ամաց 58.

Սիմոն Հէֆիմեան որդի Մարեմայ Մարիան  
ի 15 Գեկտ. 1837 հնգամեայ.

Մարիամ Մարիան դ. Մարտիրոսի ի 4 Յուլիս  
1847 ամաց 45.

Յովսէփ Հէֆիմեան որդի Մարեմայ Մարիան  
յ13 Յուլիսի 1848 վեցամեայ.

Աննա Մաղարեան դ. Աղաւնոյ Մարիան յամ-  
սեան Սեպտ. 1848 եռամեայ.

Հովսէփիմէ Մաղարեան դ. Աղաւնոյ Մարիան  
ի 24 Ապրիլի 1854 ութ-ետամեայ

Լուցիա Մարիան դ. Մարտիրոսի ի 19 Գեկտ.  
1867 ամաց 60.

Մարիամ Պիլեգիկեան դ. Վառվառեայ  
Մարիան ի 22 Ապրիլի 1869 ամաց 25.

Տիրուհի Հէֆիմեան դ. Մարեմայ Մարիան ի  
15 Օգոստ. 1872 ամաց 48.

Աղանի Մարիան դ. Մարտիրոսի ի 14 Յու-  
լիսի 1873 ամաց 59 կողակից Գ. Մաղա-  
րեանի:

Գրիգոր Պիլեգիկեան որդի Վառվառեայ  
Մարիան ի 1 Յունիսի 1875 ամաց 27.

Թագուհի Հէֆիմեան դուստր Մարեմայ  
Մարիան յ9 Նոյեմբ. 1875 ամաց 37.

Իսկուհի Հէֆիմեան դուստր Մարեմայ  
Մըսըրլեան յ13 Գեկտ. 1879 ամաց 52.

Վառվառէ-Բուբուլ Մըսըրլեան դուստր Մար-  
տիրոսի ի 4 Մարտի 1881 ամաց 62.

Սովիա Մարիան դուստր Մարտիրոսի ի  
14 Մարտի յամին 1887 ամաց 76.

Սուրբիկ Մաղարեան կողակից Անտոն Ագա-  
րեան ծնեալ 1843 † 1909.

Մարիամ Մաղարեան կողակից Անտոն Ագա-  
ւորեան ծնեալ 1849 † 1912:

Վէմս անբարբառ կացցէ ի յիշատակ Մար-  
տիրոսի Մարիան.

Եւ սերնդոց ցոցա որք ի Տէր հանգեան.

Մարտիրոս Մարիան ի 14 Գեկտ. յամի 1834  
ամաց 63.

Սրբուհի Տէվրիշեան կողակից Մարտիրոսի  
Մարիանց յ13 Գեկտ. 1841 ամաց 57.

Սրբուհի Մարիան դ. Պօղոսի ի 10 Ապրիլի  
1856 հնգետասան ամաց.

Մարտիրոս Մարիան որդի Պօղոսի ի 6 Մարտի  
1860 ութամեայ.

Աննա Մարիան դ. Պօղոսի ի 15 Ապրիլի 1865  
միամեայ.

Վերոն Տաւուքեան կողակից Պօղոսի Մարիան  
ի 27 Յունուարի 1872 ամաց 40.

Պօղոս Մարիան որդի Մարտիրոսի  
ի 27 Ապրիլի 1873 ամաց 61.

Յովհաննէս Մարիան որդի Պօղոսի յ3 Փետ-  
րուարի 1899 ամաց 46.

Եղուարդ Մարիան որդի Պօղոսի ի 16 Սեպ-  
տեմբերի 1908 ամաց 51:

Մարիամ Մարյան դ. Պողոսի կողակից  
 Լեւոնի Տիգրան 1916 չոկ. 17.  
 Պողոս Մարյան որդի Յովհաննու 1917 Նոյ. 6.  
 ամաց 42.  
 Յովհաննէս Մարյան որդի Եղուարդայ  
 յ8 Մարտի 1879 վեցամսեայ.  
 Ալիծ Մարյան դուստր Եղուարդայ Մարյան  
 ի 25 Դեկտեմբեր 1912 ամաց 27<sup>42</sup>»:

2. ՊՈՂՈՍ ՊԵՅ ՄԸՍԸՐԼԵԱՆԻ ՍԵՐՈՒՆԻԸ

Պողոս եւ Վերոն Մըսըրլեան ամուր մեծ  
 սերունդի մը նախածնողքն եղած է, բայց  
 կեանքի դժխեմ պայմանները արգելք հանդի-  
 սացած են այդ բազմանդամ սերունդի խաղաղ  
 կերպով աճումին ու յաւերժացումին: Ան-  
 հանդուրժելի միջավայրի պարտադրած փո-  
 փոխութիւններն ու մասնաւորապէս օտար  
 երկիրներու ոչ-տոհմիկ պայմանները՝ ցը-  
 բուումի, ձուլումի եւ կորսուելու դատա-  
 պարտած են այդ սերունդը: Թուրքիայէն  
 հեռացած Մըսըրլեաններ կը յիշուին Յունաս-  
 տան, Իտալիա եւ Ֆրանսա: Այնքան աւելի  
 ցաւալի է այս ազնուական տոհմին կորուստը,  
 երբ նկատի առնենք որ ան բացառիկ մէկ-  
 տեղում մը կը ներկայացնէր Հայ Կաթողիկէ  
 մեծագոյն եւ ազնուագոյն Գերդաստաններու.  
 — Մըսըրլեաններուն խնամիացած էին. Տիւ-  
 գեանք, Ալլահվերտեանք, Տաւուտեանք, Թըն-  
 կըրեանք, Գըլնեանք, Պիլեգիլեանք, Հա-  
 սունեանք, Ազնուարեանք, Հանիպիարեանք,  
 Ազարեանք, Նափիլեանք, Գասապեանք, Մա-  
 բուսեանք (Եգիպտոս), եւ այլն:

Պողոս Պէյ ունեցած է 3 մանչ եւ 5 աղ-  
 ջիկ. Սըբուհի, Մարտիրոս, Օննիկ, Պրիմիտ,  
 Յարութիւն-Եղուարդ, Սուրբիկ, Մարիամ  
 եւ Աննա:

1. Սըբուհի. — Պողոս Պէյի անդրանիկ  
 զաւակը՝ Սըբուհի ծնած է 1841ին եւ տասնու-  
 չինգ տարեկան ծաղիկ հասակի մէջ մեռած:  
 Սըբուհի մեռած է 1856 Ապրիլ 10ին<sup>43</sup>: Ինչ-  
 պէս վերը ըսինք՝ հաւանօրէն Պողոսի առա-  
 ջին կողմէն է Սըբուհի Մըսըրլեան:

2. Մարտիրոս. — Ծնած 1852ին, հազիւ  
 Տամկայ՝ մեռած է 1860 Մարտ 6ին<sup>44</sup>:

3. Օննիկ Պէյ. — Ծնած է 1853ին եւ իր  
 աղջային ուսումն ու կրթութիւնը ստացած  
 Պոլսոյ Վիեննական Միութեան վարժարանի

<sup>42</sup> Հ. Յակոբ Մ. Վ. Բոսեան, Գերեզմանատուն  
 Կաթողիկէ Հայոց Կ. Պոլսոյ, Վիեննա 1931, էջ 253—  
 256:

<sup>43</sup> Բոսեան, անդ՝ էջ 255:  
<sup>44</sup> Անդ:

մէջ<sup>45</sup>: 20 տարեկան էր, երբ Մայր Թագուհիի  
 սեղանաւոր կը կարգուի: Մասիս<sup>46</sup> կը տե-  
 ղեկադրէ. «Հանգուցեալ Մըսըրլեան Պողոս  
 Պէյի որդի Օննիկ Պէյն՝ իւր հօրը տեղ Բարձր.  
 Մայր Թագուհւոյն սեղանաւոր անուանուե-  
 լով՝ կիրակի օրը Վեհ. Սուլթանին ներկայա-  
 նալու պատիւն ունեցաւ»: 1875ին կը ստա-  
 նայ Իւլայի Բ. աստիճանը<sup>47</sup>: Կ'անուանուի  
 Հաշուակալութեան Խորհուրդի անդամ (Con-  
 seiller à la Cour des Comptes) եւ քիչ վերջ  
 կը ստանայ Պալայի աստիճան:

Օննիկ Պէյ, ջերմ ազգասէր, մասնակ-  
 ցած է աղջային գործերու իրրեւ Երեսփո-  
 խան, Երկոտասանից Վարչութեան անդամ  
 եւ այլն<sup>48</sup>: Իր շքեղ պարտէզը տրամադրած է  
 Աբարատեան Ընկերութեան կազմակերպած  
 հանդէսներուն, ուր փայլած է իր առատա-  
 ձեռնութիւնը<sup>49</sup>:

Նոյնպէս իր Տիկինը, Տիկ. Թագուհի  
 շատ օգտակար գործունէութիւն ունեցած է  
 աղջային շրջանակներու մէջ: 1880ի Հայաս-  
 տանի ահաբեկ սովին առթիւ Պոլսոյ մէջ Հայ  
 Տիկնանց Յանձնախումբ մը կազմուած էր  
 իրրեւ Օժանդակ Մարմին «Սովելոց Խնամա-  
 տար Կեդ. Մասնաժողով»ին: Տիկին Թա-  
 գուհի Մըսըրլեան գործօն անդամը կ'ըլլայ  
 «Հայ Տիկնանց»ին: Ահա ցանկը «Հայ Տիկ-  
 նանց Յանձնախումբ»ին.

- Տիկին Յովհ. Ալլահվերտի
- Տիկին Ալիշան
- Տիկին Գէորգ Արսլանեան
- Տիկին Յակոբ Կէօզէեան
- Տիկին Համամեան
- Տիկին Յովհաննէս Մըսըրլեան
- Տիկին Շապուրօֆ
- Տիկին Վահան<sup>50</sup>:

Տիկին Թագուհի բարիք սփռած է մա-  
 նաւանդ իրրեւ անդամ Հայ Կաթողիկէ «Գրա-  
 սէր Տիկնանց» Ընկերութեան, որուն Ատե-  
 նապետ եւ Նախագահ եղած է Տիկին Տիրուհի  
 Անտոն Մըսըրլեան<sup>51</sup>:

<sup>45</sup> Համ. Կանոնադիր Ընկերութեան նախկին ա-  
 շակերտաց Վարժարանին Հարց Միութեանց Վիեննա  
 1888, էջ 14:

<sup>46</sup> 1873, թ. 1380:  
<sup>47</sup> Մասիս, 1875, թ. 1641:  
<sup>48</sup> Մասիս, 1879, թ. 1270: — Թէրնէմանը Էփ-  
 ֆիար, 1879, թ. 530. 1883, թ. 1692:  
<sup>49</sup> Համ. Մասիս, 1879, թ. 2417, 2432: —  
 Փունց, 1879, թ. 1410:  
<sup>50</sup> Թէրնէմանը Էփֆիար, Կ. Պ. 1880, թ. 804:  
<sup>51</sup> Տէրնէմանը Էփֆիար, 1880, թ. 854:

Օննիկ Մըսըրլե ամուսնացած է Անտոն  
 Գըլնեանի դուստր՝ Թագուհի Գըլնեանի (ծն.  
 1857 + 1941) հետ եւ օրհնուած 7 զաւակնե-  
 րով, որոնք են. 1. Պողոս Պէյ (1875 + 1917  
 Նոյ. 6), Գննիչ Թուրք Հանրային Պարտուց.  
 1914ին ընտրուած է Հայ Կաթ. Երեսփոխաց  
 Ժողովին անդամ<sup>52</sup>: 2. Պետրոս Պէյ (1882  
 + 1952), մեքենագէտ-ճարտարագէտ. իր  
 դուստրն է Ալիմէ (ծն. 1921ին): 3. Անտոն  
 Պէյ (ծն. 1888): 4. Վերոնիկա (ծն. 1879),  
 ամուսնացած Յովհ. Պուրսալեանի (Փաստա-  
 րան) հետ եւ ունեցած 2 աղջիկ. Ալիս (ծն.  
 1907) եւ Լիւսի (ծն. 1909), որոնք այժմ  
 Պարիս կ'ապրին: 5. Ալիմէ (ծն. 1880),  
 ամուսնացած Դոկտ. Նափիլեանի Փաշայի  
 որդւոյն՝ ճարտարագէտ Գասպար Նափի-  
 լեանի (1874 + 1938) հետ: 6. Աննա (ծն.  
 1884), որ ամուսնացած Յովսէփ Գասապեանի  
 հետ՝ ունեցած է 2 զաւակ. Արսէն (ծն. 1905)  
 եւ Եղուարդ (ծն. 1909): 7. Սոփիա (ծն.  
 1889), ամուսնացած Կարապետ Մաբուսեանի  
 (Եգիպտոս) հետ:

Օննիկ Պէյ Մըսըրլեան մեռած է 1899  
 Փետր. 3ին, 46 տարեկան:

4. Պրիմիտ. — Պողոս Պէյի դուստր  
 Պրիմիտ (1856 + 1942) ամուսնացած է Անտոն  
 Հանիպիարի (1853 + 1923) հետ, որմէ ունե-  
 ցած է 3 զաւակ. 1. Պողոս (1873 + 1923), որ  
 ամուսնացած Ֆիլովէն Ազարեանի հետ՝ կ'ու-  
 նենայ մանչ մը (ծն. 1909) եւ աղջիկ մը (ծն.  
 1922). 2. Վերոն (1874 + 1950), որ ամուս-  
 նացած Երուանդ Թընկըրեանի (կոչուած՝  
 «Պաղտատուր» 1858 + 1940) հետ՝ կ'ունենայ  
 2 զաւակ. Վահէ եւ Նուարդ. 3. Օննիկ (ծն.  
 1875):

5. Յարութիւն-Եղուարդ Պէյ. — Ծնած  
 է 1857ին: Իր պետական պաշտօններէն ծա-  
 նօթ է Բարձր. Դրան Իրաւագէտ-Խորհրդա-  
 կանի օգնական եղած ըլլալը: 1879—1881  
 եղած է Ս. Յակոբ Հիւանդանոցի Հոգաբար-  
 ձութեան Ատենապետ<sup>53</sup>:

Երուարդ Պէյ Մըսըրլե ամուսնացած է  
 Յովհաննէս Ալլահվերտիի աղջկան՝ Աննա  
 Ալլահվերտեանի (1861 + 1940 Յիւրանս)  
 հետ, որմէ ունեցած է 4 զաւակ. 1. Պողոս  
 Պէյ (ծն. 1877), որ եղած է Պաշտօնատար  
 Սեղանաւորական Հաստատութեան<sup>54</sup>. 1917ին

<sup>52</sup> Ժամանակ, Կ. Պ. 1914, թ. 1846. 1915,  
 թ. 2061:  
<sup>53</sup> Հ. Ս. Սրապեան, Ս. Յակոբ, անդ՝ էջ 140:  
<sup>54</sup> Ժամանակ, 1918, թ. 3338:

Ս. Յովհ. Ոսկերբեան եկեղեցւոյ կալուածոց  
 Մատակարարութեան Մասնաժողովի անդամ  
 է<sup>55</sup>. 1918ին Հայ Որբերու համար կազմուած  
 Յանձնաժողովի մէջ է<sup>56</sup>. 1919ին Հայ Կաթո-  
 ղիկէ Վարչական Խորհուրդի անդամ է<sup>57</sup>.  
 1919 Մարտ 19ին Գրիգոր Սինապեանի հետ  
 Պարիս կը մեկնի՝ իրրեւ Պատուիրակ՝ Պա-  
 րիսի մէջ գումարուելիք Հայկական Խոր-  
 հրդաժողովին<sup>58</sup>. 1924ին ամուսնացած է An-  
 gélique Metaxas ի հետ եւ ունեցած զաւակ  
 մը — Jacqueline (ծն. 1925): 2. Յովհան-  
 նէս (+ 1879 8ին՝ 6 ամսեայ): 3. Լիւսի (ծն.  
 1880 + 1939 Յիւրանս), որ ամուսնացած Ar-  
 thur, Comte Triange di Maderno ի (Փոխ-  
 Ծովակալ եւ Ծերակուտական) հետ՝ ունե-  
 ցած է երեք զաւակ — Conrad, Amalena եւ  
 Sabine: 4. Ալիծ, ծնած 1885ին՝ մեռած է  
 1912 Դեկտ. 25ին, 27 տարեկան եւ մարմինը  
 ամփոփուած է Ս. Աստուածածին Աթոռա-  
 նիստ Մայր-Եկեղեցւոյ շրջակային մէջ եղած  
 Ալլահվերտեանց դամբարանին մէջ<sup>59</sup>:

6. Սուրբիկ. — Սուրբիկ Մըսըրլեան  
 (ծն. 1858) ամուսնացած է Պողոս Հասու-  
 նեանի հետ եւ ունեցած 2 զաւակ. Միհրան  
 (ծն. 1891) եւ Վերոն (ծն. 1875), որ ամուս-  
 նացած է Միհրան Սաւալունցի հետ:

7. Մարիամ. — Պողոս Պէյ Մըսըրլեանի  
 դուստր Մարիամ (ծն. 1861 Սեպտ. 8ին  
 + 1916ին Հոկտ. 17) ամուսնացած է Միհրան  
 Պէյ Տիգրանի որդւոյն՝ Լէոնա-Միքայէլ Պէյ  
 Տիգրանի (ծն. 1856 Փետր. 22) հետ:  
 Հարսանիքը տեղի ունեցած է 1881 Յուլ. 22ին  
 Ս. Յովհ. Ոսկերբեան եկեղեցին: Մարի եւ  
 Լէոնա ունեցած են 2 զաւակ. Միհրան-Յով-  
 հաննէս (ծն. 1882 Յուլ. 14<sup>60</sup>) եւ Պողոս-  
 Զարեհ (ծն. 1884 Յունուար 27):

8. Աննա. — Պողոս Պէյ Մըսըրլեի  
 կրտսեր զաւակը՝ Աննա ծնած 1864ին՝ 1865  
 Ապրիլ 15ին միամեայ մեռած է:

Ե. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԸՍԸՐԼԵԻ ՏՈՂՄԸ

Ինչպէս վերը ակնարկեցինք՝ Մըսըրլեան  
 Գերդաստանի երկրորդ տոհմէն քանի մը ան-

<sup>55</sup> Տարեկան Տեղեկագիր Ս. Յովհ. Ոսկերբեան  
 եկեղեցւոյ, Կ. Պ. 1918, էջ 1:

<sup>56</sup> Ժամանակ, անդ:  
<sup>57</sup> Ժամանակ, 1919, թ. 3439:  
<sup>58</sup> Անդ՝ թ. 3473:  
<sup>59</sup> Ժամանակ, 1912, թ. 1307—1309:  
<sup>60</sup> Հ. Գ. Մ. Վ. Մէնէվիչեան, Ազգայնութիւն  
 Ազնուական Զարմին Տիգրանց, Վիեննա 1890, Տոհ-  
 մագիր. հատնօրէն սխալ է ծննդեան թուականը:

ձեր միայն ծանօթ են: Այս տոհմին հայրն եղած է Յովհաննէս Մըսրըլը, որ ապրած է իր 1770—1820: Անծանօթ են իր ծննդեան եւ մահուան թուականները: Իսկ անունը, ինչպէս նաև իր որդւոյն անունը մեզ հաղորդած է Արհապատիւ Բիրէճեան Գերասայմ-ձառ:

Յովհաննէս Մըսրըլը որդին է Գրիգոր Մըսրըլը, որ 1828ի հալածանքի ժամանակ թարագը աքսորուած է<sup>61</sup>: 1830ին աքսորէն վերադարձած ըլլալով՝ մասնակցած է Հայ Կաթողիկէներու առաջին Ազգային ժողովին, որ տեղի ունեցած է Պոլսոյ Ֆէնէն թաղի մէջ 1830 Փետր. 15/27ին: Այս ժողովին ընտրած 10 «Գործունեայ Երեսփոխաններէն» (Գործադիր ժողով) մին է Գրիգոր Մըսրըլը, ինչպէս ցոյց կու տայ հետեւեալ ցանկը.

- Կէօզէք Անտոն Աղա, Պիլէզիկճի Պօղոս Աղա, Խիւսափերի Պետրոս Աղա, Բըլ-ճը Վիշէն Աղա, Թընկըն Կ. Անտոն Աղա, Սաքանան Մելքոն Աղա, Ազնա-ւորեան Գէորգ Աղա, Մըսրըլեան Գրիգոր Աղա, Պօզուճու Պաշատուր Աղա եւ Արզար Յակոբ Աղա<sup>62</sup>:

Ինչպէս կը տեսնուի՝ Հայ Կաթ. Հաս-մայնքի վարչական անձ եւ հետեւաբար կա-րեւոր դէմք մըն է Գրիգոր Մըսրըլեան:

Գրիգոր Մըսրըլեանի անձնական գործն եղած է ժապաւիհագործութիւն (չէրիթճի), ինչպէս կը յիշուի Հ. Գրիգ. Վ. Գալէմբիա-րեանի ձեռագիր գրութիւններու մէջ, առանց մանրամասնութեանց:

Գրիգոր փեսայացած է Հանրմ Օղլուի (Անտոնի<sup>63</sup>) եւ ունեցած 3 գաւակ. Արուսեակ, Անտոն եւ Լուցիքա:

Գրիգոր Մըսրըլեանի մահուան տարին, ինչպէս ծնունդինը՝ անծանօթ է:

Իր գաւակներէն Արուսեակ ամուսնացած է Մկրտիչ Թընկըրեանի (ծն. 1808 † 1848) հետ եւ ունեցած 5 գաւակ. Լուչիա, Յակոբ, Անտոն, Մարիոնեա եւ Աոփիա<sup>63</sup>:

Արուսեակ մեռած է 1844ին:

Գրիգոր Մըսրըլը կրտսեր գաւակը՝ Լու-ցիքա ամուրի մնացած է ըստ Պր. Ղեւոնդ Թընկըրեանի:

<sup>61</sup> Հ. Գրիգորի Մ. Վ. Գալէմբիաբեանի ձեռագրերուն մէջ:  
<sup>62</sup> Ասկէրեան, անդ՝ էջ 23:  
<sup>63</sup> Տես առանց մասին. Գույումճեան եւ Թընկը-րեան Գերգաստանները, Վիեննա 1951, էջ 77—78:

Իսկ անոր որդւոյն՝ Անտոնի մասին ու-նինք քիչ մ'աւելի տեղեկութիւն: Ծնած 1814ին՝ ամուսնացած է Տիրիկ (Տիրուի) տուտու թաւու քանակի (մեռած Պարիս) հետ: Զաւակ չեն ունեցած Անտոն եւ Տիրուհի, ցոյց երկու որբեր որդեգրելով՝ խնամած են զանոնք: Այդ որբերն են՝ Ռոզա եւ Միխայէլ (Միշէլ), քոյր եւ եղբայր: Օրիորդ Ռոզա ամուսնացած է պրուսացի Յովակիմ Քէ-լեանի որդւոյն՝ Տիրան Քէօլեանի հետ՝ կնքահայրութեամբ Բերովբէ Երայէթեանի: Պսակը տեղի ունեցած է 1883 Փետր. 13ին<sup>64</sup>: Տիրան եւ Ռոզա ունեցած են զաւակ կը պակսի: Տիր. Ռոզա մեռած է Նիս: Մի-քայէլ (Միշէլ) իր դպրոցական շրջանը Վիեն-նական Միխիթարեան վարժարանի (Պոլիս) մէջ աւարտելէ վերջ՝ մտած է թուրք պետա-կան ծառայութեան մէջ: Եղած է թուրք Հան-րային Պարտուց Վարչութեան Ընդհ. Տնօ-րէնի Խորհրդական եւ ստացած Օսմանիէ երկրորդ եւ Մէնիսիէի երրորդ աստիճանի շքանշան (Ընդարձակ Օրացոյց Ազգ. Հիւանդանոցի, 1900, էջ 303): 1913ին Պատուոյ Նախագահ է «Վիեննական Միխիթարեան Հարց Նախկին Աշակերտաց Միութեան»: 1920ին Հայ Կաթ. Երեսփոխան է<sup>65</sup>: Որքան կ'երեւայ՝ Միքայէլ ամուրի մնացած է: Մե-ռած է Պարիս:

Անտոն Մըսրըլեան արտօնատէր եղած է Բէյրութի Մաքսատան՝ Պէյութեան աստի-ճանով: Մաքսատան արտօնութիւնը յանձ-նուած էր իր քեռայր՝ Մկրտիչ Թընկըրեանի: Սա 40 տարեկան հասակին († 1848) տարա-ժամ մահանալով՝ գործը կը յանձնուի Անտոն Պէյ Մըսրըլեանի:

1865ին Անտոն Պէյ կը յիշուի իրրեւ սե-ղանաւոր<sup>66</sup>: Նոյն տարի Նապոլէոն Գ. իրեն կը շնորհէ Պատուոյ Լէգէոնի Պաշտօնակա-լութեան պատուանշանը<sup>67</sup>:

1869ին անգամ կ'ընտրուի Երիթէքը Ու-մուսիէ Մալիէ Օսմանիէ Ընկերութեան, որ Պարիս ալ ճիւղ ունէր: Ընկերութեան գրա-մագլուխն էր 2,000,000 թրք. ոսկի: Ընկե-րութեան Պոլսոյ կենդրոնը Ղալաթիա էր<sup>68</sup>:

Անտոն Պէյ Մըսրըլեան՝ Հայ Կաթ. Հան-րային կեանքի մէջ եւս ստանձնած է պաշ-

<sup>64</sup> Թէրեմեանը Էփիար. 1883, թ. 1652:  
<sup>65</sup> Ժամանակ, 1920, թ. 3748:  
<sup>66</sup> Մասիս, 1865, թ. 692:  
<sup>67</sup> Մասիս, անդ:  
<sup>68</sup> Փունջ, Կ. Պ. 1869, թ. 375:

տօններ եւ կատարած խղճամտօրէն: 1864—1872 Ատենապետն է Ս. Յակոբ Հիւանդա-նոցի Հոգաբարձութեան, որուն ամբողջական կազմը ահաւասիկ.

- Մըսրըլը Անտոն Պէյ Ատենապետ
- Չըրաճը Գրիգոր
- Ճարեան (Միսկճի) Յարութիւն
- Կէօզէեան Պօղոս
- Ապտուլլահ Պ. Միքայէլ
- Ուզուրլու Անտոն
- Սանտալճեան (Գալաթճը) Գրիգոր
- Կէօզէեան Յովհաննէս
- Միւրմէլեան (Թօփաբլաք) Յովսէփ
- Մինապեան Պրան (Աղա Պէյ)
- Խորասանճեան Յովհաննէս
- Թօփուզեան Պետրոս<sup>69</sup>:

«Կարի արդիւնաւոր է այս Հոգաբարձու-թեան պաշտօնակարութիւնը, կը գրէ Հ. Սա-հակ Մրապեան<sup>70</sup>, վասն զի ոչ միայն իրեն նախորդէն դոյացած պարտքը ազգ. հանգա-նակութեամբ մէկ տարուան մէջ մեծ մասամբ կը հատուցանէ, այլ եւ մեծ զարկ կու տայ Ս. Յակոբոյ ներքին բարեկարգութեան եւ անոր կարուածոց յաւելման»:

Հանգանակութեան մ'առթիւ Պօղոս Պէյ Մըսրըլը 5500 դուրուշ, իսկ Անտոն Պէյ 5000 դուրուշ նուիրատուութիւն կ'ընեն<sup>71</sup>:

Անտոն Պէյ 1865—1868 Հայ Կաթ. Ազգ. Ժողովի եւ Յանձնաժողովներու ալ ան-դամ է<sup>72</sup>:

Իր բարեք պաշտօնակարութիւնն ու անձնական առատաձեռնութիւնը պատճառ կ'ըլլան որ երկրորդ անգամ ալ ընտրուի Ատե-նապետ Ս. Յակոբոյ Հոգաբարձութեան: Այս պաշտօնը կը վարէ նա 1872—1874<sup>73</sup>:

Մինչեւ 1874 Անտոն Պէյ եղած է նաև Ղալաթիոյ հոյ կաթ. Ս. Փրկիչ եկեղեցւոյ միւրեմէլիին<sup>74</sup>:

Անտոն Պէյ Մըսրըլը ամուսին՝ Տիր. Տի-րուի ալ բարեբարուհի մ'եղած է Ս. Յակոբ Հիւանդանոցի ազգատներուն ու խեղճերուն: 1879—1880ին ընտրուած Հայ Կաթողիկէնե-րու «Գթաւէր Տիկնանց» անուանի եւ մեծ

<sup>69</sup> Հ. Ս. Վ. Մրապեան, Ս. Յակոբ Ազգ. Հիւանդ-անոց, անդ՝ 113:  
<sup>70</sup> Անդ՝ էջ 113—114:  
<sup>71</sup> Անդ՝ էջ 117:  
<sup>72</sup> Հմմտ. Մասիս, 1865, թ. 81: — Հ. Ս. Վ. Մրապեան, անդ՝ էջ 126:  
<sup>73</sup> Հ. Ս. Վ. Մրապեան, անդ՝ էջ 129:  
<sup>74</sup> Մասիս, 1874, թ. 1512:

Ընկերութեան Ատենապետ՝ այդ Ընկերու-թեան միջոցաւ շատ բարեգործութիւններ ըրած է: 1892ին Հ. Մրապեան կը գրէ<sup>75</sup>. «Մըսրըլը Տիրիկ Տուտու, նախագահ Եա-ֆաֆաք Կանանց Ընկերութեան (Գթաւէր Տիրիկանց), Անկերանոցս գալով Նոյեմբերին մէջ կը խորհրդակցի Հոգաբարձութեան հետ աղքատաց անուխ բաժնելու մասին»: Տիրիկ Տիրուհի Ընկերութեան Նախագահ ընտրուած է 1891ին. Ընկերութեան Վարչութեան մէջ իրեն օգնական ունեցած է Տիր. Թագուի Օննիկ Մըսրըլեանը<sup>76</sup>:

Տիրիկ Տիրուհի Անտոն Պէյ կեանքին վերջին տարիները Պարիս անցուցած եւ հոն ալ վախճանած է: Մահուան տարին անծա-նօթ:

Նախորդ գլուխին մէջ տեսանք Մըսրը-լեան Տան Ազգին ըրած մէկ մեծ բարեբարա-կան գործը: Մըսրըլեան Տունը Հայ Ազգին ըրած ուրիշ բարեգործական արարքով մ'ալ անմահացուցած է իր անունը: Այս երկրորդ բարեգործութիւնը ըրած են Մըսրըլեանք Երուսաղէմի նուիրական վայրին վրայ — Հայ Կաթողիկէ Պատրիարքարանին համար Երուսաղէմի մէջ հող գնած եւ եկեղեցի կա-ռուցած են:

Պոլսոյ Փունջ թերթը արդէն 1868 Օգոս-տոս 24ին արձագանգ եղած է Մըսրըլեաննե-րու այս բարեբարական ձեռնարկին: Թերթը կը գրէ. «Հռովմէական ազգայնոց Պատ-րիարք-Կաթողիկոս Գեր. Հասունեան Հինգ-չարթի օրը մայրաքաղաքէս ուղևորեցաւ դէպ ի Լիրանն: Կ'ըսուի թէ անկէջ Ս. Երու-սաղէմ եւ ապա Հռոմ պիտի երթայ եւ թէ Ս. Երուսաղիմայ մէջ հռովմէական վանք մը պիտի հաստատուի ծախիւք Մըսրըլեան Պօ-ղոս Պէյի<sup>77</sup>»:

Թէ Պօղոս Պէյ այդպիսի մտադրութիւն մ'ունեցած է՝ ուրիշ կողմէ չենք կրցած տուրել: Այնպէս կը թուի սակայն որ թերթը չփոթութիւն մ'ունեցած է անուններու. — ո՛չ թէ Պօղոս Պէյ, այլ Անտոն Պէյ եղած է Երուսաղէմի բարեբարը: Իսկապէս ալ Ան-տոն Պէյ Մըսրըլեան՝ ուղերով Հայ Կաթ. Պատրիարքարանը օժտել Երուսաղէմի մէջ սեպհական գեախնով եւ եկեղեցիով մը՝ 1881էն առաջ հոն հող մը գնած է:

<sup>75</sup> Անդ՝ էջ 219:  
<sup>76</sup> Մէնուայր Այսպար. Կ. Պ. 1891, թ. 2252:  
<sup>77</sup> Փունջ, 1868, թ. 200:

Ժամանակակից Թերեմանը Էփֆիար 1881 Սեպտեմբեր 24 թուականով կը գրէ. «Անտոն Պէյ Մըսըրլեան Երուսաղէմի մէջ հող մը գնած եւ Պոլսոյ Հայ Կաթ. Պատրիարքարանի նուիրած է: Այս հողին վրայ կը գտնուի Կոստանդիանոսի մօրը՝ Սըրբուհի Հեղինէի Դ. գարուն սկիզբը շինած մեծ եկեղեցւոյ մը աւերակը: Հրաման ըրած են որ այս աւերակը պեղուի եւ ինչ հնութիւն որ գտնուի՝ պահպանուի: Մկրտիչ Վ. Աշնեան պաշտօն կ'ընդունի այսօր մեկնել նաւով Երուսաղէմ<sup>78</sup>»:

Անտոն Պէյ Երուսաղէմի մէջ գնած այդ հողին վրայ յետոյ եկեղեցի մը եւ հաւանօրէն նաեւ անհրաժեշտ բնակարան ժողովրդապետական կառուցած է: Հակառակ մեր պրպոտումներուն ու հարկ եղած տեղերը ըրած դիմումներուն՝ չկրցանք ստուգել եկեղեցւոյ շինութեան թուականը եւ յարակից պարագաները:

Ներկայիս Երուսաղէմի Հայ Կաթողիկէ պատրիարքական փոխանորդութեան տեղապահ Գեորգ. Յովնանէս Վրդ. Գույումեան Մասիսի մէջ հետեւեալ լուսարանութիւնը տուած է Մըսըրլեան Անտոն Պէյի բարերարական գործի մասին. «Անցեալ դարու կէսին՝ Երուսաղէմի Կաթողիկէ Պատրիարքական փոխանորդութեան տեղապահ եղաւ Սերոբէ Ծ. Վրդ. Դաւիթեան, որ առաջած էր Գրիգոր-Պետրոս Ը. փոխան՝ Միքայէլ Արքեպ. Աղեքոսանդրեանի, որ տիրոջատունն է Երուսաղէմի: Հողն ու առաջին եկեղեցին կը պարտինք Անտոն Պէյ Մըսըրլի բարերարութեան... ամենէն արդիւնաւոր ժողովրդապետն եղաւ Տ. Յովակիմ Ծ. Վրդ. Թումայեան, որ շինել տուաւ նոր եկեղեցին<sup>79</sup>»:

Անտոն Պէյ Մըսըրլեան 1888 Փետր. 14ին կնքած է իր արդիւնաշատ կեանքը: Մարմինը կը հանդէս Ծիչլիի գերեզմանատունը, ուր «հանգստեան մատուռ»ի մը ճակատը գրուած է. Գերդաստան Մըսըրլեան, իսկ ներսը քարի վրայ.

Անտոն Մըսըրլեան  
ծնեալ յամին 1814  
վախճանեալ 14 Փետրուար 1888<sup>80</sup>:

<sup>78</sup> Թերեմանը Էփֆիար, Կ. Պ. 1881, թ. 1232:  
<sup>79</sup> Մասիս, Պէյրութ 1952, թ. 45:  
<sup>80</sup> Հ. Յ. Ծ. Վ. Բօսեան, Գերեզմանատուն, անդ՝ էջ 77:

Մահէն երեք տարի առաջ, 1885 Յունիս 11ին, Անտոն Պէյ կտակ մ'ըրած է, որով 3000 օսմ. ոսկի կը յատկացնէ Ս. Յակոբի վարժարանին եւ Անարատ Յղութեան աղքատ սանուհիներուն: Կտակահատար նշանակած է Գրիգոր Չըրաքը, պայմանաւ որ կտակի գործադրութիւնը ըլլայ իր մահէն 2 տարի վերջ<sup>81</sup>:

Բացի վերոյիշեալներէն՝ Մըսըրլեան Գերդաստանի կը վերաբերին հետեւեալ անձերն ալ, որոնց մասին ոչ մէկ լուսարանութիւն կրցանք գտնել.

- Մարի Կիւզէլեան  
ծն. Մըսըրլեան  
1856 † 1923.
- Եղբայրդ Գրիգոր  
Ջերմ արցունքով լի  
Դընէ գայս տապան  
Հոգւոյդ անմահի<sup>82</sup>.
- Ընտանիք Ժ. Մըսըրլեան  
Էփրիկ Մըսըրլեան  
1858 † 1923<sup>83</sup>

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

<sup>81</sup> Տես այս մասին Հ. Մ. Վ. Սրապեան, Ս. Յար, Հիւ. անդ՝ էջ 210—213:  
<sup>82</sup> Հ. Յ. Ծ. Վ. Բօսեան, անդ՝ էջ 77:  
<sup>83</sup> Անդ՝ էջ 100:

**ՊԵՏՐՈՒԹԻՒՆ ԼՁՋԱՐԵԱՆ ՏՈՂՄԻ**  
**ԵՒ ԼՁՋԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ**

Աշխատասիրեց՝ ՅՈՎԱԿԻՄ ԹԱԴԵՈՍԵԱՆ  
(Շարունակութիւն):

**ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ**

ԳԼՈՒԽ Ը.  
ՃԵՄԱՐԱՆԻ ԱՇԽԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ ՈՒ ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄԸ  
(1815—1890)

Ճեմարանը սկզբից ունեցել է միայն զիւրօթիկ աշակերտներ՝ Լազարեանները որ զեղիւնները, այնուհետեւ ժամանակի ընթացքում ընդունուել են նաեւ երթեւեկներ ու նոր զիւրօթիկներ՝ մասնաւոր նուիրատուների որդեգիրներ եւ կամ սեփական հաշուով սովորողներ:

Գիւրթիկ աշակերտների 9/10ըզը եղել են հայ երեխաներ եւ շատ փոքրաթիւ ուսուերեխաներ. այսպէս, օրինակ, 80ական թուականներին, զիւրթիկ աշակերտների թիւը հասել էր շուրջ 160 հոգու, որոնցից միայն 15 հոգի ուսու երեխաներ էին: Մեծ մասը եկած էին Արարատեան աշխարհից, իսկ մի փոքր մասը՝ Հիւսիս. Կովկասից: Իմ աշակերտութեան ժամանակ կային նաեւ 3 հոգի Պոլսեցի հայ երեխաներ, որոնցից միայն մէկը աւարտեց ճեմարանն ու համալսարանը, եղաւ բժիշկ եւ մնաց Թուսաստանում, միւսը՝ Կրկից դուրս եկաւ, իսկ երրորդը՝ ստորին դասարաններից հեռացաւ:

Աշակերտների թուի մասին 1815 թ. մինչեւ 1865 թ. չկան սխտեմատիկ տեղեկութիւններ. մի քանի տուեալներ զանազան ժամանակների համար արդէն յիշատակուած են մեր պատմութեան ընթացքին:

Հետեւեալ տախտակի վրայ մատնանշուած են աշակերտների թուի մասին տեղեկութիւններ սկսած 1865 թ. մինչեւ 1890 թ. այդ տուեալները մենք քաղել ենք «Լազ. Ճեմ. 75ամեակը» հրատարակութիւնից:

Այս տախտակից երեւում է՝

ա. Որ աշակերտների թիւը աստիճանաբար աճել է եւ այդ աճումը աւելի ուժեղ է եղել 1872 թ. յետոյ, երբ ճեմարանը նոր կանոնադրով անցել է ժողովրդ. լուսաւորու-

Ընդհանուր տախտակ  
Լ. Ճեմարանի աշակերտների թուի 1865—1890 թթ.

Պատ. թ.	Աշակերտների ընդհանուր թիւը առ մեր ճեմարանը	Երթեւեկներ	Գիւրթիկներ	Հայ տուսուերեխաներ	Որդեգիրներ	Ըրեւնաւորներ
1865/66	159	13	146	—	95	3
1866/67	153	9	144	—	98	11
1867/68	161	23	138	—	94	17
1868/69	157	25	132	96	97	16
1869/70	162	22	140	96	94	—
1870/71	156	20	136	97	89	11
1871/72	177	23	154	104	92	8
1872/73	183	29	154	101	95	4
1873/74	223	43	180	114	95	3
1874/75	234	49	185	132	94	3
1875/76	241	66	175	—	94	—
1876/77	241	63	178	149	94	10
1877/78	248	67	181	154	93	7
1878/79	242	65	177	157	92	9
1879/80	256	69	187	—	88	9
1880/81	246	64	182	171	91	8
1881/82	240	63	177	168	90	11
1882/83	216	47	169	149	94	21
1883/84	228	72	156	149	96	12
1884/85	246	74	172	156	98	12
1885/86	242	71	171	156	96	11
1886/87	246	84	162	152	100	10
1887/88	259	95	164	160	98	9
1888/89	275	109	166	159	96	6
1889/90	273	117	156	158	101	7
Ընդամենը	5464	1382	4 82	2778	2364	218*

թեան միջնակարգ ու բարձրագոյն դպրոցների շարքը:

բ. Որ զիւրթիկ աշակերտները միշտ կազմել են մեծամասնութիւն երթեւեկների համեմատութեամբ:

գ. Որ հայ երեխաները կազմել են ճեմարանի ամբողջ աշակերտութեան 60—75%ը այդ է պատճառը, որ Լազարեանները միշտ համարել են, որ ճեմարանը հայկական դպրոց է, թէեւ դպրոցական բոլոր առարկաները աւանդուել են ուսուերէն լեզուով, բացի Հայոց լեզուից, Հայոց պատմութիւնից ու կրօնից:

\* Մի այլ տեղում մատնանշուած է՝ 224: